

7739

910.4(47.925)

z-42

1878

Nov 26  
1878

310.4 (4.925)  
3-42 սր

№ 2867  
1895

ԻՍԱԿԱԿ ՅԱՐՈՒԹԵՒՆԵԱՆ

91

# ԱՃԱԿԵՐՏԻ ՅՈՒՂԵՍՏԵՏՔ

3-38

ՀԱՅՈՒԹՅՈՒ ԱՌԱՋԻՆ

«Frisch, frei, fröhlich, fromm».

«Թարմ, ազատ, ուրախ, համեստ»:

2867

863X

— O O —

1457

Արտաստանած «ԼՈՒԻՄԱՅ» հանդիսից



ԹԻՖԼԻՍ

Արևատիկ տպարան Մո. Մարտիրոսյանցի  
Միքայելյան Փող. ՏՈՒ Ն 81

1897

28681-ահ.

Հ Յ Ա Կ Ե Ր Ժ Ի Յ Ա Խ Ո Ւ Ճ Ա Տ Ե Ց Բ Ժ Պ Ղ

863X

Սոնահին, 27 յուլիսի, շաբաթ:

Առաւոտեան ժամի 4 էր: Արշալոյսը գեռ նոր էր ծագում և երկինքը կարծես թէ հրդեհուել. էր աստղերը գեռ բոլորովին չէին անյայտացել, մի քանիսը նրանցից գեռ փայլում էին երկնակամարի վրայ: Բնութիւնը կենդանացել էր և գիւղացին էլ սկսել իր գործը:

Այդ ժամին եթէ մէկը մտնէր մեր սենեակը՝ անսովոր կենդանութիւն և իրարանցումն կնկատէր: Մէկը տրեխներն էր կապում, երկրորդը վերաբկուն ծալում, երրորդը զիսարկի արեակալ զգնոցն ամրացնում, չորրորդը ճանապարհորդական պարկի միջի իրեղիններն էր նորից զիտում և այն:

Ի՞նչն էր առիթ՝ տուել այդ իրարանցման:

Այդ օրը պէտք է սկսուէր մեր առաջին ճանապարհորդութիւնը և ուսուայ գաւառում. այդ ճանապարհորդութեամբ մենք պէտք է ցոյց տայինք՝ թէ գիտենք կարգ ու կանոն պահպանել և աշակերտական նստարաններից դուրս ևս ընկերական կեանք վարել: Ահա այդ բարոյական պարտաւորութիւնն էր, որ մեզ հարկադրում էր ամեն կերպ հոգալ՝ որ ոչ մի անկարգութիւն, ընդհանուր կանոնների զեղծումն չինք մեր կողմից: Այդ էր պատճառը, որ թէ նախորդ երեկոյեան մեր բոլոր ճանապարհորդական իրեղիններն արդէն կայդգաւորել էինք, բայց այնուամենայնիւ մեզնից ամեն մէկը մեղից վերկենալով՝ իր պարտաւորութիւնն էր համարում երկրորդ անգամ աշքի անցնել իրեղինները և տեսնել թէ արդեօք ամեն բան իր տեղն է: Թէպէտ մեր ընկերներից մի քանիսը սովորութիւն էին արել պահանջուած կարգապահութեան դէմ միշտ տրաունջներ յայտնել, բայց այս անգամ, պէտք է ասած, որ ընդհանրապէս բոլոր նրանք սրտով և սիրով էինք հնագանդում ընդհանուր կանոններին:

Дозв. ценз., Тифлисъ, 3-го Февраля 1897 г.



( 964  
41 )

21942-60 2004

Հատապով թէյ խմելուց և նախաճաշելուց յետոյ, մօտաւորապէս ժամի 6 էր, երբ պատրաստ, զինուորական կարգով կանգնած էինք՝ երեսներս դարձրած դէպի մեր դաստիարակը, որ մի քանի խօսքով թուեց մեղ այն գլխաւոր վայրերը, որ պէտք է այցելէինք, խրախուսեց մեղ կարգապահ լինել և ոգեսրեց՝ մեր նախնեաց անցեալ փառքի վեհութիւնը յիշեցնելով:

Յետոյ մեր դաստիարակի խնդրանօք՝ գերապատիւ Վարդան ծերունազարդ արքեպիսկոպոսը և Սանահնի ծխատէր քահանայ Տէր-Յովհաննէսը օրհնեցին մեր ճանապարհը «պահպանից»-ով և «Տէր ուղղեա զգնացս մեր» մաղթանքով:

Անկարելի է նկարագրել թէ ինչ էր զգում մեզնից իւրաքանչիւրն այդ միջոցին, թէ ինչպիսի մաքեր էին խռնւում մեր պատանեկան ուղեղներում։ Անկարող եմ բացատրել այն զգացմունքը, ինչ որ զգում էի այդ բովէին. երեկ ես այնպիսի ջերմունդութեամբ և զգացմունքով չէի հետեւ որ և է աղօթքի, ինչպէս այդ առաւոտ երեակայութիւնս թոփշքներ էր անում և անցեալի յիշողութիւնները ներկայի ու ապագայի հետ շաղկապում... մինչ ես այսպէս մաքերիս մէջ խորառուգուած արձանացել կանգնել էի, յանկարծ լսեցի «յառաջ» խօսքը և քայլերգի ներդաշնակ հնչիւնները. առաջ էինք զնում զինուորական կարգով և համաշափ քայլուածքով։ Մեր ճանապարհորդական հագուստ միատեսակ էր. հազած ունէինք սպիտակ կտորից (պարուսին) վերնաշապիկ և անդրագոյն զլխարկ՝ արեակալ զլնոցով. ձեռքերնիս բանած ունէինք սրածայր փայտեր, իսկ մէջքերնիս՝ ծալած ձմեռուայ վերարկուն և ճանապարհորդական սպարկը, որի մէջ գանուում էր մի ձեռք փոխնորդ, մի ձեռք ձմեռուայ զգեստ, գուլպայ, թաշկինտկ և մի օրուայ պաշար՝ հայ ու պանիր։

Մեր ճանապարհորդական հագուստի նկարագիրն ամրագծացնելու համար պէտք է աւելացնել, որ հազած ունէինք լաւ տրեխներ՝ երկար գուլպաների վրայ. գուլպաների մէջ էին ամրացրած անդրագարածիքի ծայրերը։ Ահա այս զգեստների մէջ զարմանալի չէ, որ շատ տեղերում մեղ նորակոչ զինուորների տեղ էին ընդունում՝ նամանաւանդ որ թմբկահար և փողհար էլ ունէինք։

Մեր քայլերքն ու երաժշատական դործիքների հնչիւնները մի բովէ հեռացնում էր գիւղացիների ուշագրութիւնն իրենց

գործից. Նրանք մօտենում էին ճանապարհին՝ սիրով սղունում և հետաքըզըութեամբ զիտում էին մեղ. Այս կարգով հասանք մինչեւ ձորի գլուխը և այգտեղ կանոնաւոր քայլուածքը ընդհատելով՝ առաջ շարժուեցանք մէկ-մէկ կամ ազատակամ կազմուած փոքրիկ խմբերով. Մի բովէ կանգ առնելով ձորի գլխին՝ զմայլում ենք գեղեցիկ ախսարանով. անդնդախոսը ձորի մի կողմից բարձրանում են ուղղահայեաց ահարկու ժայռերը, իսկ միւս կողմից կանաշազարդ այգիները. հեռուից երևում է Լալուար սարը, իսկ ձորի մէջ փագում է կատաղի Զորագեալ կամ Դերէալ՝ լայնարերան ալիքները զարկելով անզգայ ժայռերի կրծքին։ Չորի արեեհան կողմից երևում է ահեղ քարաժայուի վրայ ցըցուած Կայեան պատմական բերգը. Արեն էլ արբէն իր ոսկեգոյն ճառագայթները սփառել էր լեռանց կատարների վրայ և հրաշալի գոյն էր տալիս սար ու ձորերին։ Անսովոր ճանապարհորդը կը զարհուրի՝ տեսնելով այն սարսափելի ժայռերը, որոնց միջով մի նեղ օճապասյա շափի իջնում է դէպի անդունդը. ահա այդ ծուռ ու մուռ և «ամուտք» կոչուած ուղիով ցած ենք իջնում և մասածում, որ հթէ Աստուած մի արասցէ, ոտքդ մի փոքր սայթաքի՝ առանց այլեալութեան ահագին ժայռերին ջախջախուելով անդունդը պիտի զլորուես և Զորագեալ փրփրագէզ ալիքներին զոհ գնաս:

Անվանդ անցնելով քարածերպերից՝ հասանք ձորի այն տեղը, ուր սրբնթաց Դերէալի վրայ ձգուած է հոյափապ քարաշէն կամուրջը և դաստիարակի ցուցումներով սկսեցինք կամուրջի դիտողութիւնը։ Սեղորեաց ձորի այս պատմական կամուրջը շինել է տուել նանա այրի թագուհին՝ ի յիշատակ իր վաղաթառամ ամուսնու, Լոռու Արաս թագաւորի և Զաքարէ ու Իւանէ սպասալար եղրայրների։ Կամուրջի երկարութիւնն է 28 սաժէն, լայնութիւնը՝ 5 արշին, կամարի բարձրութիւնը՝ 19 արշին. շինուած է կամարների վրայ սրբատաշ քարերից։ Կամուրջի մի ծայրը հաստատուած է ժայռի վրայ, իսկ միւս ծայրն ամուր որմի վրայ և գէպի հարաւ իջնում է աստիճաններով։ Կամուրջի երկու կողմը գտնուում են չորս կոփածոյ քարից քանդակուած առիւծներ, որանք ժամանակի ընթացքում բաւականին մաշուել են։ Կամուրջի ներքին ծայրում գտնուում է մի խաչքար՝ կամուրջ շինողի, նանա բարեպաշտ թագուհու հրամանով կանգնեցրած. խաչքարի վրայ արձանագրնաւած է հետեւալը.

«Կամտան Աստուծոյ իս նաև յազգէ Բագրատունեաց զուսաբը Մեծին Սարգսի քայլ Զաքարէի և Խւանէի կին Արասայ թագաւորին որ վախճանեցաւ Կեսարեայ խւարեցոյց զմեզ. կանդնեցի զսաշո, շինեցի զկամուրջո յիշատակ նմա և ի միիթարութիւն ինձ և ի կեանս ծնողաց և եղրարց մերոց. յիշեցէք ի Քո. Յո.\*\*)»:

Խաչի ճակատը, որ այժմ կոսպուած և վայրէ ընկած, կըրում է հետեւել արձանագրութիւնը.

Նշանդ Աստուծոյ լիր բարեիսօս իշխանաց յազգէն Բագրատունեաց:

Եօթը հարիւր տարսւայ այս հրաշակերտ կամուրջը ապացոյց է մեր նախնեաց հմուտ ճարտարապետութեան. ոս միակը չէ, մեր ճանապարհորդութեան միջոցին պատահել ենք նոյնանման քարակերտ կամուրջների, որոնք մօտ տասնեակ զարեր անցնելուց յետոյ էլ նայողին զարմացնում են իրենց ամբութեամբ և դիմացիւնութեամբ՝ թէն շինուած են Չորագետի նման կատաղի հոսանք ունեցող գետերի վրայ:

Կամուրջի գիտազութիւնը վերջացնելուց յետոյ՝ շարունակեցինք ճանապարհներս գետի ընթացքի հակառակ ուղղութեամբ, այգիների և ապարակների միջով: Տեղուակիր անսունների յետից գնացող գիւղացիներից շարունակ լուսմ ենք. «ագա, էտ ուր էք գընում, ուղղաթնի էք». «Ո՛չ, աշակերտներ ենք, զնում ենք Վարդարլուր ուխտի», պատասխանում ենք. մենք և երկու կողմից էլ շարունակում ճանապարհը: Սեսրդեաց ձորը տեղ տեղ նեղանում և լայնանում է. անցնում ենք մի կամարակապ կամուրջի վրայից և հետդիետէ բարձրանում ծուռ ու մուռ ճանապարհով. ձորի երկարութեամբ արհեստական պարսպի նման կանգնած են բարձրաբերձ և ուղղահոյեաց ապառաժները. արեն էլ բաւականին բարձրացել է և այդ ժայռերը տարացնելով՝ օգը ջերմացրել: Թէև բաւականին գտնուար էք այդ քարկապներով բարձրանալը, բայց բնութիւնն այնքան զրաւիչ էք, որ իր հրապարներով կաշկանդելով մեր սիրան և ուշազրութիւնը՝ անհնատելի էք դարձնում ճանապարհի անտառներութիւնը: Ուրիշ

\*) Հայաստանի հիւսիս-արևելեան գաւառում իշխող Աբաս թագաւորը մեռաւ 19 տարեկան հասակում՝ թողնելով նանացից մի որդի՝ Աղսարթան անոնով, որ և յետոյ յաջորդեց նրան:

պայմանների մէջ գուցէ մենք գժուաբանայինք բարձրանալ այդ օձապտոյա լեռնալին շաւիդներով, բայց մի այսպիսի գեղեցիկ և բանաստեղծական վայրում համարեան թէ անզգալի կերպով հասանք ձորի գլուխը: Այստեղից նորիզոնն աւելի ընդարձակուելով տեսարանն էլ առաւել գեղանկար էք. մի կողմից խորն անդունդի մէջ Զորագեան արծաթեայ գօտու նման շրջապատում է անտառներն ու այգիները, միւս կողմից տարածում է ընդարձակ գաշար. գաշտի սահմանում երևում են բլրաշաղեր և ապա Լալուար լիրան գագաթը. երեսում են նոյնակէս Ամոճ և Օձուն գիւղերը:

Չորի գլխին, ուր մենք մի փոքր հանգիստ առանք և որը ծովի մակերեսոյթից 1000 մետր բարձրութեան վրայ է գտնում, գտնում է գեղեցիկ քանդակագործութեամբ մի խաչքար, որի պատուանդանի վրայ երեսում են եղծուած արձանագրութեան հետքեր: Խաչքարն ինչպէս երեսում է բաւականին հին պէտք է լինի և կարելի է ենթագրել, որ շինուած լինի այդ սեպացած քարածայւերի միջով ճանապարհ հարթողի ձեռքով:

Մի փոքր ժամանակ հանգստանալուց յետոյ՝ ժամի ութին ճանապարհ ընկանք զէպի Օձուն կամ Ուզունլար կոչուած գիւղը՝ Յովհաննէս Խմաստասէր կաթողիկոսի հայրենիքը. անցնում ենք ընդարձակ գաշտի միջով, որի մի մասը գեռ ծածկուած է ցորենի ոսկեգոյն արտերսիկ: Աշխատանէր գիւղացին մի կողմից՝ մանգաղը վայրեցնելով հնձում է արար, իսկ միւս կողմից՝ արգէն հնձած արտերը վարում գութանով: Քանի առաջ ենք զնում, գիւղն աւելի որոշ է երեսում. գիւղն ամրողապէս շրջապատուած է ծառազարդ այգիներով: Խոկ այգիների միջից երեացոյն գէզերը մի առանձին գեղեցիկութիւն են տալիս գիւղի տեսքին. ծառերի կատարների վրայից փայլում է եկեղեցու կաթողիկէի խաչը:

Երբ մօտեցանք գիւղին, կարգի ընկանք և զինուարական քայլով ու երածշտութեամբ գիմեցինք զէպի նորընծայ Տէր-Բաղգասար քահանայի տունը. մեր երածշտական փարբիկ խմբին ձայնակցում էք գիւղի անզին գամփոների խմբական հաջոցը: Գիւղում կինդանութիւն էք ափրում, որովհետեւ կալի ժամանակն էք և ամեն կողմից «կալ արա, զարման արա, եղը ջան...» էք լսում: Մեզ գիմաւորեց նորընծան և երեխ գործի տաք ժամանակը լինելով՝ շուտ հեռացաւ և այնուհետեւ շերեաց. մենք

Ներս մտանք սենեակը հանգստանալու, որպէս զի նորից կարողանանք շարունակել մեր ճանապարհը. երկար մնալ չեխնք կարող, որովհետև այդ երեկոյ անպատճառ պէտք է Վարդաբլուր լինէինք, որպէս զի միւս տուաւուր հանդիսատես լինէինք սուրբ Սարգսի ուխտագնացութեամնը:

Երկու ժամ հանգստանալուց և ճաշելուց (հաց, ձու, պանիր) յետոյ չնորհակալութիւն յայտնեցինք հիւրաւէր քահանայի երիտասարդ եղօրը և ժամի 11-ին գլուխից զուրս եկանք նոյն կարգով՝ ինչպէս որ ներս էինք մտել. Կէսօրուայ շոգն սկսուել էր, երկինքը պարզ և անամպ. արտերի միջով գնում ենք դէպի հարաւ-արևմուտք. աեսաբանն էլ միշտ միենոյնը—անընդհատ դաշտեր՝ լիներով սահմանափակուած: Առաւոտեան մեր ուրախ տրամադրութիւնը մի փոքր պարել է, շոգը զօր է անում, ջուր էլ չկայ. բայց երբ մեր շուրջը նայելով՝ տեսնում ենք արիւնքրտինք մտած գիւղացուն արար հնձելիս և երգելիս, քաջալերուում ենք և զրուցարելով առաջ քայլում: Տեղ տեղ մեր խումբն երկալուն պէս՝ հնձուորները մի խուրձ ցորեն խոտած գաղում էին մեր դաստիարակի առաջը կտրում. «Եղա, Սոծու ողորմութիւնը քեզ փէշքէշ» ասում և զրամ ստանալով օրհնելով հեռանում:

Կերջապէս երեաց իգահատ կամ Սյունատ գիւղը, մօտեցանք, աղբիւրից ջուր խմեցինք և կրկին շարունակեցինք մեր ճանապարհը. Դեկի մօտ ճանապարհը երկուուի էր բաժանուում և չփատէինք թէ ո՞րն ընարենք. գաստիարակը ձայն տուեց հնձաւորներից մէկին, որ հարցնէ թէ՝ ո՞րն է Վարդաբլուր տանող ճանապարհը: Փախանակ պատասխանի, մէկ էլ տեսնես հնձուորներից մէկը մի խուրձը շարակած գաղում է դէպի մեղ. երբ հասու, խուրձը զրեց մեր առաջը և ասոց. «Ճեղ փէշքաշ ա, աղա»:

—«Դեռ իմ հարցին պատասխան տուր, ո՞րն է Վարդաբլուր ճանապարհը»:

—«Ճէ, Հլա մի սրան ջուղար տու, եղնա»:

—«Ի՞նչ ջուղար, տամ»:

—«Թէ մի էրկու չահի բախչեցէք, հէնց գիտենանք թէ ուխտատեղումը տանձի էք տուել—կիբեր»:

—«Եղ լաւ փէշակ չի, ինչ որ զուք բանեցնում էք»:

—«Թէ ինչ անենք, աղա, սովորութիւն ա, ոնց որ տեհել ենք, էնպէս էլ անում ենք...»:

Գիւղացին հեռացաւ, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհը. չասանք մի ձոր, որի միւս ափին երեւում էին ծաթեր և Շորագեղ հայ գիւղերը և հեռուից տեսանք Ղաշաղան կոչուած գիւղը, որ երկի «ղաշաղ» թուրքերէն բառից կազմուած լինելով՝ նշանակում է ղաշաղների կամ աւաղակների բուն. ղաշաղացիները ժողովրդի բերանում կոչւում են «աղուաւ թուցնող», թէ ինչու, չկարողացանք իմանալ: Երբ իմացանք, որ աղբիւրը զտնուում է ձորի մէջ և թէ կէս ժամ էլ պէտք է կնանք, որպէս զի սառը ջրի համ տեսնենք՝ մեր դէմքերը կարծես թէ դժոն արտայայտութիւն ստացան. ճանապարհորդութեան առաջին օրը լինելով և քիչ էլ փափուկ ապրելուն սովոր լինելով՝ անսովոր էինք համբերութեան այսպիսի դասերին, բայց հետզհեալ այդ էլ սովորութիւն դարձաւ մեզ համար: Երբ հասանք աղբիւրին՝ սիրտներս ուրախայցաւ, աղբիւրի սառնորակ, բայց չափազանց բարակ ծորող ջուրը փայտեայ կիսախողովակի միջով թափուում էր նոյնպէս փայտեայ երկարածի աւաղանի մէջ, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ծառի մի ահազին բուն, մէջը փորած. դրան գիւղացիները կոչում են «նաւ» կամ «նով» և գրա միջից են անասունները ջուր խմում: Աւազանի մէջ շարուած էին մի շարք մեծ ու փոքր փայտեայ ջրամաններ ու կժեր, իսկ զրանց մօտ կանգնած կամ նստած էին մի խումբ երեխաներ, որոնք հերթի էին սպասում: Զուր չեն ասում ուրեմն «ջրչոր եղած ղաշաղնցիք»:

Մենք մեր ճանապարհորդական թիթեղեայ բաժակներով խմելով ջուրը, ակամայ ուշաղբութիւններս գարձրինք այն փայտեայ փոքր ջրամանների վրայ, սրոնք իրենց ձեռվ արդէն ցոյց էին տալիս, որ գիւղացու սեպհական անարուեստ ձեռքի արդինք են:—Հայ գիւղացին ամբողջ ամառը ղաշաղին պարագմունքով զրաղուած լինելով՝ ձմեռն էլ պարապ չէ նստում տանը և իր ձեռքով է պատրաստում տանու իրերը. տաշտ, ջրաման, կոթ, գգալ, աման, թի, յորսլի, եղան, սայլ, լուծ և այլն, որոնք հարկաւ մեծ մասամբ կոսիտ տաշուածքներ են լինում, թէն պատահում են նաև ճարտար արուեստագէտներ, որոնք հասարակ և նահապետական գործիքներով՝ նուրբ քանդակուած իրեր են պատրաստում:

Սառնորակ ջրով մի փոքր կազմուրուելով՝ իջնում ենք զէպի ձորը, որ կոչւում է «Հնէվանայ ձոր». Ժայռի զիմին կա-

սուցուած է «Հնէվանք»ի անսւնով թերթը, որի աւերակներն են մնայել այժմ։ ձանապարհը քարքարոտ է, մեր ընկերներից մի քանիսի ուղերթ «Հրաժարիմք» են կարդում, սակայն «անճարը կերել է բանջարը», միւսներից խրախուսուելով կամայ ակամայ առաջ են շարժում. ամենից առաւել երկար մանգալու անսովոր են հանդիսանում մեր թիֆիզգի ընկերները . . . Անցնում ենք մի փայտեայ կամուրջի վրայից. ասառամբների ստուերում հանգստանում է ոչխարի հօտը. այդտեղից էլ սկսում է մի զառափեր և օձապոյտ ճանապարհ և ապա իջնում կըկին ծխախոտի ընդարձակ ցանքսերով ծածկուած ձորբ։—ծխախոտի մըշակութիւնը այստեղ բաւականին տարածուած է. քիչ է արտահանուում, մեծ մասամբ իրենց գործածելու համար են մշակում. ծխախոտը միջակ և ստորին տեսակիցն է, ծախում են փունաը  
20 կոպէկով։

Մինչ մենք գանգատուում էինք՝ թէ Աղլիսանեանի գործարանում պատրաստուած և մասամբ եւրոպական չնորնք տուած արեխները լաւ չեն պաշտպանում մեր ոսպերը քալերից, գաստիարակը մեր ուշագրութիւնը գարձեց շուտ շուտ պատահող ուխտաւորների խմբերի վրայ, որոնք գնում էին «ուարորիկ»։ Հայ ուխտաւորները ըստ նախնի սովորական ջերմեւանդութեան և հաւատի ուտարորիկ են ուխտ գնում—երբեմն մի քանի օրուայ ճանապարհ։

Եհա մօտենում են մեզ մի խումբ ուխտաւորներ, մեծ մասամբ կանայք։

—«Նանի, բարի օր ձեզ, ուր էք գնում»։

—«Վարդպարուր ուխտի, սրգիք, ո՞րդիանց էք գալի»։

—«Սանահնից. հեռու է Վարդպարուրը»։

—«2է, մօտ է, շատ հեռու չէ, իրիկնադէմին կհասնէք», պատասխանեցին նրանք և տուած անցան։

Մենք էլ մօտ ժամի 3-ին հասանք ձորի մի աղբը մօտ և գաստիարակի պատուէրով հանգստացանք այդտեղ, ծառերի հովանեաց տակ, 2որպեստի աջ ափին. Հետաքըքական էր տեսնել թէ ինչպէս մեզնից իւրաքանչիւրը մի տեղ նստած կամ կիսապառկած զրութեամբ մեծ ախորժակով մի կտոր հաց ու պանիր էր ուտում և սառն աղբը ջրից խմում։ Այդ միջնոցին մեր սոտով անցնում էին երկու գիւղացի լեռնաւարտուած ձիերով։

—«Թիձա, մրտեգացի ես»։

—«Հաղպատեցի»։

—«0՛, փիշուու ուտող Հաղպատեցի» ես հա՛, ուր ես զընում, ինչ ունիս բարձած ձիու վրայ»։

—«Գնում եմ Վարդպարուր, տանձ եմ տանում որ ծախեմ»։

—«Ո՞նց ես ծախում»։

—«Ճասը գրուտնիքան մի արասի»։

Մենք ուղեցինք տասը ֆունա գնել. գիւղացին Լուեցուն յատուկ ծանր ու բարակ և դանդաղ շարժողութեամբ հանեց կշեռը, որի թաթերը մի մի հին, ծակուած մաղեր էին. մի գլոււնիքանոցից մեծ շափ չուներ, ինչպէս չափեր տասը ֆունաը, մի քանի բոպէ տատանուեց՝ աբգեօք տասն անգամ կըուէ, թէ ուրիշ կերպ. վերջը վճուց մի քանի քարեր հաւաքել և կըշռել. հէնց որ քարերն ածում էր, թաթի մէջ և կշիռը քարձրանում՝ թաթը ծուռում էր և քարերը գետին էին թափում. տեսնելով որ այդպէս չի յաջողուում՝ գիւղացին մի թաշկինակ խընդրեց մեղնից և քարերը մէջը կապելով՝ հաղիս կարողացաւ տասը գրուանիքանոց ծանրութիւն կազմել և ապա թէ աանձը կշռել։ Այդ գործողութեան միջնոցին մենք դիտում էինք և երբեմն էլ չկարողանալով ծիծաղներս պահել՝ գուարճանում էինք. գիւղացին նկատելով այդ՝ սկսեց կշեռքի տիրոջն անիծել.

—«Ո՞վ գիտէ քրէհով ես վերցրել կշեռքը»։

—«Բա քրէհով չի ինչ ա», պատասխանեց գիւղացին և քըշց իր ձին»։

Մենք էլ մօտ երկու ժամ հանգստանալուց յետոյ՝ ժամի 4-ին ճանապարհ ընկանք և կէս ժամ գնալուց յետոյ բարձրացանք այն փոքրիկ բրուրը, որի վրայ շինուած է 2նէվանք կոշուած տերակ եկեղեցին։ Ժատապով սկսեցինք մեր զիտողութիւններն անել և գաստիարակի ցուցումները զրի անցնել։ Սըրբատաշ քարից շինուած եկեղեցու արտաքին ձեր չէ զանազանում հայոց եկեղեցիների ձեից, բացի զմբէթից, որ տարբեր է։ Եկեղեցու չէնքն անսիւն է և կաթողիկէն կանգնած է չորս խաչածե կտրող կամարների վրայ. նման է Սանահնու որ. Քրիզոր եկեղեցուն։ Արմելքից և հարավից ունի երկխորան գաւիթներ՝ սրբատաշ և քարից շինուած. հարաւային գալթում կայ նաև պատարագամատոյց սեղան։ Խորաններն առանց գուների են և բացում են եկեղեցու մէջ երկու սիւնազարդ կամարներով։ Եկեղեցու կաթուպիկէի և հարաւային խորանի ճակատին կան յունարէն և հին վր-

րացերէն (խուցուրի) տառերով արձանագրութիւններ, այդ վերջին արձանագրութեան ճակատին քանդակուած է յունական խաչ: Եկեղեցու ձեր և արձանագրութիւններից կարելի է ենթադրել, որ զանգը նախ յունական է եղել, իսկ յետոյ վրաց տիբապետութեան ժամանակ ընկել է վրաց ձեռքը: Վանքի արևելեան կողմը գտնուում է մի քառանկիւնի մեծ շինութիւն, որի տանիքն աւելուած է, իսկ որմերը շինուած են ոչ սրբատաշ քարից: Ի նկատի ունենալով չենքի անկանոն լուսամուտները և ոչ սրբատաշ քարից շինուած լինելը՝ կարելի է ենթադրել, որ եկեղեցի չէ եղել, այլ հիբրատուն կամ սովորական ընակարան: Վանքի շրջակաքրում երևում են ընդարձակ քարակոյտեր, որոնք շինութեանց հետքեր են և ապացոյց են, որ այդտեղ երբեմն բազմամարդ բնակութեան վայր է եղել:

Վանքի գլխողութիւնը վերջացնելուց յետոյ ճանապարհներս ուղղեցինք դէպի աջ կողմը գտնուող անտառը. անտառը խիտ է և շարտւնակ քարձանուում ենք. ձորի միւս տփին երեսում է Կուրդան դիւլը: Գեղից ոչ հեռու կուրդանցիք վար էին անում. 10—12 լուծ եղն ու գոմէշը քաշում էին գութանը. բաւականին հեռովցից լուսում էր վար անողների «հոռովէլուր». բարեկպաշտ գիւղացին ոչինչ գործ չէ սկսում առանց Սատուծոյ անունը տալու, որպէս զի Աստուած քաղցը աչք ունենայ իր վրայ»: Գութանի երգն էլ նա սկսում էր. «Օ՛րհնեալ է Աստուած, հոռովէլ, հոռովէլ»:

Արևել բաւականին թերուել էր դէպի իր մուտք, երբ դուրս եկանք անառաջ և մտանք գաշտը. բնութիւնը գեղեցիկ տեսարան էր ներկայացնուում. անտառապատ լիոններ, գեղեցկանիստ ըլուրներ, լայնարձակ գաշտեր, որոնք արևի մերջին ճառագայթների տակ աւելի գեղանկար էին: Զերիւոն ալիքանման տատանում էր դաշտի կանաչ խոտերն ու վեռ չհնառւած արտերը. մեր առաջն հոսում է մի առուակ, որի մօս մի փոքր հանգստանալոց յետոյ՝ շարտւնակում ենք մեր ճանապարհը:

Ուխտաւորները զնում էին ձիով, էշով, ուսքով. ոմանք էլ մի քանի ոչխար կամ զառն առաջն արած առանում էին ծափելու կամ մատաղ անելու: Կանայք իրենց զաւակներին գիրկն առած, տղամարդիկը յետւներն ընկած, քրտինքն երեսներին, կարմրած, շտապով զնում էին հասնելու այդ սրբավայրը՝ մութն ընկնելոց առաջ, կանանցից ունենք իրենց փոքրիկ մանուկներին

նստեցրել կամ կապել էին իշխ վրայ կամ ձգել խուրչինի մի կողմը և իրենք էլ «ճիպոտը» ձեռն առած՝ բգում էին իւեղմ անաստոնին, որ շուս գնայ, բայց որ սպանես էլ, էշը իր «երիշը» կը փոխի: Մնցանք Կուևան կոշուած բնակութեան մօտից, որ ունի 15 տուն բնակիչ և պատկանում է կալուածատէր Թումանեաններին, որոնք սկզբուամ մի փոքր տարածութիւն հող զնելով՝ հետզհետէ իրենց ձեռքն են ձեր լընդարձակ վարելանողեր և այժմ վարձով մշակութեան են տալիս զիւղացիներին:

Արևել վաղուց ծածկուել է լիբան յետեր, սկսում է արգին մթնել, բայց դեռ Վարդարլուլը չէ երկում. մի փոքր յառաջ, մի քանի քայլ էլ և անա երևաց Վարդարլուրը, առանձին, իրու վարդը բաւած զաշտի մէջ: Կենդանութիւն է տիրում այնտեղ. ահազին բազմութիւն է հաւաքուած րբի գագաթին և «գաւուգուռնայ»ի ձայնը պարզ հնչում է մեր ականջին: Բլլից ոչ հեռու է գմնուում զիւղը. մօտեցանք և սպասում ենք դաստիարակին—նա ամենից վերջն է վալիս, որպէս զի յետ մնացող շինի—երբ նա էլ յետամնացներին առաջն արած համաւ մեզ՝ կարգի ընկանք և ստիրական քայլով ու երգով մտանք զիւղը: Գիւղի քահանան իր որդու հետ, քեօխիան և մի քանի զիւղացիներ զիմաւրելով մեզ՝ առաջնորդեցին նախապէս մեզ համար պատրաստուած ընտիրանը—Վարպետ Ղազար Սայինեանցի տունը:

Վերաբիւներս ու պարկերս վերցնելով՝ կարգով դարսեցինք մի անկիւնում և տեղաւորուեցնաք թափախ վրայ. սենեակը մաքոք, ընդարձակ և կանոնաւոր շինութիւն էր, արևմտեան պատի առաջն ամբողջապէս բնուում էր լայն թափառը. թափախ մօս միմեանց վրայ զարսուած են անկողիններ, իսկ հարաւային պատի մէջ գտնուում է մեծ վառարանը—«պատի փէշը»: Սեկանը ծածկուած է ապիսակ սփոսոցով և միայն մի աթոռ կայ: Երկու մեծ և ապակեայ լուսամուտները բացուած են արևելեան սրմի մէջ, սրտեղ է և զուոք. զրան մօտի պատի միջ եղած միւս դուռը բացուում է դէպի հարիսն սենեակը: Պատի վրայ կափուած են շնրիցներ. սենեակում կան նաև հիւնի գործիքներ:

Արգին պատրաստի թէյն վայելելոց յետոյ՝ անուտէրն սկսեց ընթրիքի կամ մեր «Ճաշի» պատրաստութիւնը տեսմել, իսկ մենք զբաղուած էինք զրուցատութեամբ և կատակներով: Գիւղացիները զարմանք էին յայանում, որ մէկ օրում այնքան երկար ճանապարհներ եկել ուտքով. ոմանք մեր անցած ճանապարհը համարան էին

60 վերստ, ումանք յիսուն և ումանք էլ 40 վերստ. մեր ենթագլուղ թեամբ էլ վերջին թիւն աւելի մօտ պէտք է լինէր ճշմարտութեան: Երեկոն անցաւ բաւական ուրախ, թէև մեր ուրքերի «հալլ հաշէր» և մեր խոնջացած անդամները հանգստութիւն էին պահանջում: Վերջապէս ախորժակով վայելեցինք տանափրոջ պատրաստած «քաշովին» սկսեցինք քնելու պատրաստութիւն տեսնել: Տանտիկինը յատակի վրայ փուեց կապերոներ, առւեց դօշակ, բայց մեր խմբի մի մասը տեղաւորուեց թախտի, միւս մասն էլ յատակի վրայ: Մեր վերարկուներն էլ ծառայում էին վերմակի տեղ:

Վարդարուր, 28 յուլիսի, կիրակի:

Պայծառ արել բաւականին բարձրացել է հորիզոնի վրայ. նրա կինսատու ճառապայթները ներս թափանցելով մեր սենեակը՝ արդէն լուսաւորում են մեր գէմֆերը, բայց մենք բոլորս հանգիստ պատկած ենք գեռ:

— «Ճե՞րք, վեր կացէք, թէ չէ շուտով սփառաւրները յետ կպառնան Սուրբ Սարգսից», լսեցինք յանկարծ դաստիարակի ձայնը և ամսնքու վեր թուամք, մի քանի բոսէից յետոյ մեզ կարելի էր տեսնել գիւղի աղբրի մօտ լուսցուելիս: Եկանք տուն, արդէն պատրաստի թէյն և հայ ու պանիրը վայելեցինք և ճանապարհ ընկանք դէպի բլուրը, որ զանուամ է գիւղի արենելեան կողմը: Վերարկուները մէջքերնիս թէք կերպով կապած և վայտերը ձեւքերնիս բարձրանում ենք բլուր՝ հիւսիս-արեկելեան կողմից:

Վարդարլուր (\*), ի՞նչ բանսատեղծական անսուն, զաղափարի ի՞նչ ճշտագոյն արապայտութիւն, այն, զուր չէ մեր ալեզարդ «նահապետ» բանսատեղծը, հայր Ալիշանը, զիիշ շարժել՝ զովարանելու այդ բլուրը՝ թէև ինքը չէ տեսել: Այսօր աւելի ևս զեղեցիկ է այդ կանաչազարդ բլրակը, նեղ շաւիղը տանում է դէպի վերեւ. գյոնգոյն ծաղիկներ են սփառուած բլրի շորս կողմը, տուառեան զով քամին փշելով բերում է դէպի մեզ այդ բիւրաւոր անուշ ծաղկանց բուրմունքը: Բլրի գագաթին, ծառերի միջից երեւում է սր. Սարգսի ուխտաւեղին պարսպով պատած: Ահա այդ-աեղ են ուխտի զալիս այսօր ամբողջ Լոռուայ գաւառից, քարաւանի նման երկար շաբթերով բարձրանում են հարիւրաւոր կանաչք

\*) Ոմանք «Վարդարլուր»ը կը մատուած են համարում «Վարդանայրուր» բառերից:

աղջիկներ, երիասասարդներ, պատանիներ և երեխաներ, գրանց խայտաբղէտ զգեստների զոյները կարծես թէ մրցում է զաշտային ծաղիկների զոյների հետ. անտառի ստորոտում «քէֆ» են տնում արդէն երեկուայ եկածները: Ոլքան բարձրանում ենք, այսքան ընդարձակում է նորիզոնը և երեսում ուխտաւորների աւելի ստուար խմբեր. ճանապարհին մի փոքր հանգստանարուց յետոյ՝ նորից շարունակում ենք բարձրանալ և վերջապէս համուում ենք բլրի գագաթը, որ վերջանում է երկու առանձին բարձրացած ահապին ժայռերով: Խնչակը որ տեղացիք պատմում էին, ըլլի գագաթին ժամանակով խիտ անտառ է եղել, որից այժմ միայն մի քանի ժառեր են մնացել: Բլրի գագաթին երկու ժայռերի մէջ գտնուում է մի տափարակ տեղ. ահա այդտեղ է հաւաքւում ուխտաւորների բազմութիւնը:

Մարդու աշքերը շանում են՝ մի քանի բոպէ նայելով այդ բազմագոյն ամբոխին. տղամարդ, կին, երեխայ, ձի, եղներ, սայլ խառնուած իրար, կատարեալ բարիլոնեան խառնակութիւն են ներկայացնում. չես իմանում թէ ո՞ր կողմը նայես: Ահա մի տեղ քննթկաները ծնօաին կանայք նստած գեանին փռած վալասի վրայ, միմեանց ականջումն են վսփառում. մի ուրիշ տեղ ահապին պղինձներով «մատադ» են եփում. երրորդ տեղը «սազանդարն» ու զուռնաշիները «քօքել» են իրենց սազերն ու զուռնա գհօլը. գրանց շուրջն են հաւաքուել պարօները: Մի այլ տեղ հաւաքուել են մըզգավաճառի զլիսին և նայում թէ ո՞վ ինչ է առնում. շատերն էլ պարապ կանգնած՝ իրենց շուրջն են նայում, իսկ մատուափ տուած, ուր առանց էն էլ տեղ չկայ, այնքան բազմութիւն է հաւաքուել, որ անց կենալու տեղ չկայ: Հին ֆարաջան հազին, խունացած կամբլաւկան մի փոքր ծուռը զլիսին դրած, մազերը ճակատին փռուած և «քրայմարում կորած» Գեղամ հայր սուրբը հրամայում է, որ ամբոփ մեզ ճանապարհ տայ: Հայր սուրբի խօսքն իսկոյն իր աղքեցաթիւնն ունեցաւ և ուխտաւորների միջով անցնելով հազիւ կարտղացանք խորանը մտնել:

—«Էս սըլլայթնին ըստի իսի են էկէ», «սրանց լագէրը որտեղ է ա», «ախչի էս սալդաթներն էլ են ոխ եկել», «Ո՞յ, էսէնց պուճուր ոնց են տարել սրանց սալդաթ»: ահա այս բացագանչութիւններն ինքը լսում ամեն կողմից. մեր խմբովին յայտնուիլը զրաւեց բոլքի ուշագրութիւնը, բոլորն էլ հետաքրքրուում էին մեղնով և մեր հագուստից խարուելով՝ զինուորներ էին կարծում մեզ:

Մատուրի արտաքին տեսքը շատ անշուք է և երկու մասից է բաղկացած. առաջին մասը փայտեայ սիմերի վրայ հաստատուած մի սրահ է, որ վերջերս է շնուռալ. այդ սրահի միջից է գտնուում խորանի մուտքը: Սրահը լիքն էր ուխտաւոր կանանցով. դրանք մէկ մէկ մտնում էին խորանը, համբուրում, ծունդ զնում և դուրս գալի: Խորանն այնքան փոքր է, որ երկու մարդ միայն կարող են ազատ ներս մտնել, համբուրել ու դուրս գալ. մատուրի ներսը լայսը թափանցում էր նեղ լուսանցքով: Խորանն ունի մի պատրագամաասոց սեղան, առանց խաչկալի. սեղանի վրայ փրուուած էր մի «քաղցակի» և վրան բազմեցրած է թափանցիկ քողով ծածկուած սրբութիւնը: Խորանի մի անկիւնում կանգնած էր մի ծերունի քահանայ, ձեռքերը ցած թողած, մէջքը կորացրած, ալեխառն մօրուսով, բայց սկ մազերով. սկզբումը կարծեցինք թէ պատժուած քահանայ է, բայց վերջն իմացանք, որ այսօրուայ պատրագիչն է և պատրաստում է: Քեմի վրայ դրուած էր սուրբ Աւետարանը, որ. Սարգիս մատուրը և մի պղնձեայ տիսէ. ջերմեռանդ ուխտաւոներն Աւետարանը համբուրելուց յետոյ իրենց լուման ձգում են այդ ափուի մէջ:

Հայ գիւղացին դաւն քրտինքով ձեռք բերած մի քանի սկ կոպէլիները չէ խնայում «փաշահամբյը» կամ «աջահամբյը» տալու. առհասարակ հայերն առատածեւն են եղել գէալի իրենց վանքերն ու եկեղեցիները: Հայ ժողովրդի և իշխանների վաղով են շինուել Հայաստանի բարոր վանքերն ու ծաղկելով երկար դարերի ընթացքում պահպանուել: Վանքերին ընծայուած կարուածքները կազմում էին վանքի սեպհականութիւնը. եկեղեցական կանոնների համաձայն՝ միաբանները մասը չտնէին. նրանք կալուածքի արդիւնքը պէտք է գործ դնէին ժողովրդի օգտին՝ անկելանցներ, հիւանդանուցներ և հիւրաններ պահենով: Այժմ թէն վանքերը կորցրել են իրենց նախկին նշանակութիւնը, զրկուել կալուածքներից ու միաբանութիւնից, բայց նրանց նշանակութիւնը դեռ հայ ժողովրդի աչքում չէ ընկել և դրանցից շատերը, որ մի մի լուսատու ջահեր են եղել Հայաստանի համար և այժմ զրկուած իրենց լոյսից՝ հազիւ նշմարելի ծուփ արձակում, դարձեալ պահպանուում են ժողովրդի նուրիսիւ...:

Մատուրից զավս գալով մօահցանք այն քարակոյախն, ուր դիմում էր ուխտաւոների բազմութիւնը և դիտում ենք. կանայք իմբերով գալիս են, ջերմեռանդութեամբ համբուրում մելիք քարե-

րը, մոմ վասում, խունկ ծխում, գոյնդպայն թելեր վաթաթում և շարի կտորներ կպցնում, որպէս զի իրենց ցաւու ու վիշտն էլ մընայ այդ քարերի վրայ վաթաթուուած և իրենք ազատուին: Եւ նրանք այդ անում են համոզմունքով, լի հաւատով և յուսով. և միթէ այդ հաստատուն հաւատքի շնորհիւ չէ, որ շատ անգամ հիւանդներն ու անդամալուծները ուխտաւողներից վերագտնուած են բարտին աւողջացած. միթէ նոյն խոկ այժմեան իրական կիտութիւնները չեն ապացուցանուած «հաւաաք քո կեցուցեն զիեր» խուրի մեծ ճշմարտութիւնը...:

Մատուրի մօահնուում է մի ընդարձակ շինուաթիւն, առաստաղն ամբողջունին քանդուուած. մնացել են միայն չըս որմերը: Այդ շնորի ձեկից երեսում է, որ պէտք է հիւրատուն եղած լինի: Թէ սր. Սարգսի մատուրը և թէ հիւրատունը շինել է տուել Կիւրիկի թագաւորը հայոց ՁԼ (530) թուին (Փրկչական 1081 թ.). մատուրի շնորին աւարատուլ է Աշոտ մարծպանի ձեռքով: 1828 թուին, երբ մատուրը վեռանորպել են, գտնուել է սր. Սարգսի արծաթապատ մատունքը և կրկին թաղել են նոյն աեղը: Հիւրատան երկարութիւնը (արկելքից—արկեմուաք) 18 արշին է, լայնութիւնը 8 արշին Յ վերշոկ, բարձրութիւնը 6 արշին. հարաւային որմի վրայ գանուում է հետեւեալ արձանագրութիւնը.

«Ի ՁԼ թուականութեան հայոց ես Կիւրիկէ շինեցի . . . . (Ծնջուած) կամն մեղաց թողութեան և արիշատութեան իրոյ ընդ ձեռամբ Աշոտայ մարծպանին արժանավայելը: Պատերի վրայ երեսում են հինգ հատ կամարների մնացորդները. մուաքն արկելքան կողմից է, կիսով չափ թագուած հողի մէջ, այնպէս որ չափելու համար հազիւ կարուացանք ներս մանել. յասակն այժմ ծածկուած է մարդաշափ եղինջով: Հիւրատունն ու մատուրը պատած են եղել ամուր, բրգաւար պարիսպներով, որոնց հետքերը մինչեւ այժմ էլ մնացել են. տեղի գիրքն ենթապերել է տալիս, որ այս բլուրը կամ ամրոց է եղել կամ իշխանական ամարանոց:

Մատուրի դիտողութիւնը վերջացնելուց յետոյ բարձրացանք ըլլի ամենաբարձր գագաթը, որ մի ահազին կարմբագյն ժայռ է: Օգուտ քաղելով մեր չօրս կողմը տարածուած ընդարձակ հորիզոնից և պարզ եղանակից՝ դաստիարակը պատուիրեց մեզ համել մեր յիշասակաբանները և հետեւեալ դիտողութիւնները նշանակել.

Սուասունան ժամի 9 է. արմի ատկ ներմաշափը ցոյց է տալիս 24<sup>0</sup> (Բէօմիւր). գանուում ենք ծովի մակերեւոյթից 1610 մետր

բարձրութեան վրայ. ուրեմն մեր մշտական կացարանից, Սանհան-նից, 610 մետր բարձր ենք կանգնած: Հիւսիս-արևելքան կողմից հորիզոնը առնանագծում է 2աթին-զար լեռը. հիւսիսից՝ «Ճեղ-ադրիւթ» կամ «Տուփաջուռ» բլուր. խոկ դրա հետեւ հեռաւմ երեւում է «Լալուարայ» զագամիք, գէպի աւելի հիւսիս երևամ է «Գոլիստ» լեռը: Տուփայ ջրի և Գոլիստի մէջը գտնում է «Փծարա» կոչուած բլուր. սրանք բարորն էլ անսառագուրի և մերկ սարեր են: Գոլիստի շարունակութիւնը գէպի հիւսիս՝ կազմում է «Ղարախաշ» լեռը: Արևմտեան կողմից երեսում են. «Թուգար» լեռնաշղթան և մեծ ու փոքր «Գուռալ» լեռները, որ նշանաւոր բարձրեր են—ամենալաւ ջրաղացաբարերն այստեղ են պատրաստում: Բլուրը շրջապատուած է ընդարձակ զաշատավայրերով, որոնք Սերդեաց ձորի շարունակութեամբ երկու մասի են բաժանուած. միջովն անցնում է Գէրէտը. մեր գիրքից երեսում են Զալալօղի գիւղաքաղաքն և տասնեհինգ (15) հետեւալ գիւղերը. արևելքան կողմից՝ փոքրիկ ձորի գլխին՝ Կուրգան կամ Կորդան գիւղը. ձորի միւս կողմը՝ գէպի հիւսիս-արևելք Ղաշաղան. Նրանից աւելի հեռու մեծ ձորի միւս ափին Գուղ կամ Գուղեց: Գուղից բարձր գէպի հիւսիս, լեռան վեշշերի վրայ է Քարինջ գիւղը: Հիւսիսային կողմից երեսում է Կողէս յունարնակ գիւղը և Մղարթը. պանից արեւուք Եղբան կամ Եղիսանից յունարնակ գիւղը—երբեմն հայարնակ Եղիսակը: Հիւսիս արևմտեան կողմից երեսում է Ազարակը, խոկ դրանից բարձր Լեջան գիւղը: Արևմտեան կողմից երեսում է Ալէքսանդրովիկա գիւղն ու Զալալօղին: Արևմատ-հարաւային կողմից, Վարդարլուք գիւղի մօտ Հորաբանի գիւղը, դրանից քիչ բարձր Գիւղակը, Հայոց Քարգեառը խոկ աւելի բարձր ուստաց Քարգեառը:

Արևելքից-արևելուաք ձգում է Գէրէտայ ձորը, խոկ բլրի տակ անցնում է «Գարգեառայ ջուր» կոչուած գետակը:

Վերջանելով Վարդարի շրջակայքի գիտողութիւնը՝ իջանք ցած և մատուիր մօտ մի ստուեր տեղ ընարելով՝ գիտում էինք մեր շորս կողմն եղած բազմութիւնը. անքան ժողովսկող էր հաւաքուել այդ բարբիկ բլրի վրայ, որ խական մաքով կարելի էր ասել թէ «ասեղ զցես գետին շի ընկնի»: Ամսնք նոր են բարձրանում բլուրը, միւսներն իջնում են զաշար, ուր նոյնիէս մեծ կենդանութիւն է տիրում: Այգանդ կարելի էր տեսնել լուսու զանազան գիւղերից քնթկալները երեսին՝ կարմիր, կանաչ և այգավառի պայծառ զոյնի զգեստները հագած հարսներ ու պառաւներ.

Հուլաւրիցի և Ջալալօղիցի պճնազարդ գերիաներ հագուծ և գլուխ կապած «ասպանափառն» կանանց: Գիւղացի կանանց հագուստը բաղկացած էր հետեւալ մասերից. երկար «լէշին» (գերիա) մէկ ամբողջ կամ երկու կաղաքից՝ մէջքը սեղմուած արծաթեալ կամ ընհեղեայ գոտիով, որի ծայրերը կապւում են «թուխլա»-ով. գիմներին դնում են «չիխտի-կոպի», վրայից ծած կելով զոյնդգոյն «լէշանիներ»: բերանները կապւում են սպիտակ քնթէկալով. ոմանք ճակատին կապւում են ոսկիների շաբք, զիներիցը կախում են արծաթեալ վզնոցներ, մանեակներ, ուլունքներից ու վարունիկներից և վարունիկներից կապւուած շարաններ: Պաստակի վրայ անց են կացնում «բլագուկ»-ներ՝ արծաթից կամ յուլումքից. ականջներից կախում են ոսկիայ, արծաթեալ կամ հասարակ զինտեր. ոսքերին հագնաւմ են քօշեր, մուշիկներ, հողաթափներ, եւրովակն կիսակօշիկներ և այն: Զգեսափ ամբողջութիւնն ու գոյնը «փատուտիկ» ու նաշխանիկ» կարելի է ասել: Տղամարդկանց հագուստի մէջ միտկերպատքին շկայ և միշտ համապատասխանում է իրենց հարստութեան աստիճանին. միջակ կարողութեան աէր գիւղացիք հագուստ են ոմանք պատրաստուած շալից շուխայ, հասարակ շթից կամ «զաղաք»-ից արխալուս, կապւում են կաշուէ հասարակ զօտի, զիմն ամօթալ-փափախաւու, ոսքերին լայն շալուար և արեիներ՝ բրդեայ հաստ գուլպանների վրայ:

(264) 219 ԿՅ-60

Ամբողջ տարածութիւնը հետաքրքրական տեստարան էր ներկայացնում, որ կողմը երեսդ գարձնում են՝ շարժումն և աղմուկ է լուսում, որ կողմը նայում են՝ ուրախ և զուարթ գէմքեր են տեսնում. ամենքի երեսին էլ ժապիտ է փալում. կարծես մի աներեւթյունութիւն ուրախութիւն ներշնչած լինի ամենի մէջ: Ահա մի տեղ գեռ նոր են մատաղն եփում, միւս տեղ կանաչ խստի վրայ ըսլուած սփռուցի շուրջը ճաշում են՝ խմելով աղբրի սառը ջուրը կամ զուլաւրի կարմիր զիմնին և եկող-զնացողին համեցէք անում. մի ուրիշ տեղ զուսնան է ծանր ու բարակ ծուացնում. մի խումբ տղամարդիկ շրջան արտօն և իրար ձեռք բռնած «մալլի» են պարում և զանդաղութեամբ մերթ մէկ ուաքը շարժում, մերթ միւսը: Ահա և հայ աշուղը «սուփիի ծէրին բազմած» իր սազն է ածում ու երգում, խոկ շրջապատղներն էլ «ականջ գարձած» իրան լսում... Ան, ովստի օրը մի ընդհանուր պարաւթեան օր է: Հայ գիւղացին ամբողջ տարին աշխատանքի մէջ խրուած լինելով ահա այդ օրն աղաս է զգում իրեն առօրեայ հոգսերից ու աշխատանքից

և նուիրում է զուարձովթեան, «ՔԵՓՈ»: Մարդոց պակաս չէ ծանրաբեռնուած և հայ կինն ամբողջ տարուայ ընթացքում: Նա իր ամուսնու հետ աշխատում է գաշտումը. նա է անում տնապին բոլոր գործերը՝ լուանում է, թխում է, եփում է, կարում-կարկատում է և այլն. նա սարն է զնում՝ տաւարին նայում, իւզ, պանիր, մածուն շմում: Չմուը կապերտ, խալիչա, թաղիք է գործում, շուացու շալ է պատրաստում և այլն: Այդ է պատճառն ահա, որ երբ համում է ովաստավնացովթեան ցանկալի օրը՝ նա պատրաստում է, գաթայ, նազուք է թխում, կարագ, մածուն, մեղք է «շինում» պլիկների մէջ, մի քանի ջուխտ գեղնամոմ վերցնում, մի քանի կոպէկ աշաճամբայր և մատաղացու «թոխլին» առաջն արած՝ ամուսնու և երեխաների հետ ոտարտիկ դիմում է դէպի ովաստակովներին, իր երեսը նրա սուբր «Փողին» քսելու, մոմ վառելու, խոնկ ծխելու, որպէս զի իր «մուրարը կատարի, իր երեխայոցը, ամուսնուն արեշատովթին տայ, իրենց ցանքսին առատովթին, տաւարին առողջովթին, գիւղին խաղաղովթին, հայոց աղդին հաստառովթին...»:

Ջրի պակասովթինը ստիպում էր ովաստաւորներին իջնել ցած և անտառի կանչաղարդ հովանեաց տակ որոնել հանգստանալու տեղ: Մենք էլ իջանք բլից. ճանապարհին մեղ պատահեց Գիւլագարակ գիւղի Տէր-Սարգիս քահանան, որի մասին առաջնաց արգին շատ բան էինք լսել: Տէր հայրը մի քանի հարցումներ տալուց յետոյ հրաւիրեց մեղ իր մօտ ճաշի ասելով՝ «Եթէ մեղ մօտ գաք՝ շատ լաւ կինի, մմնաւանդ որ «սաղանդար» էլ ունեմ. իս ուրիշ քահանաների նման չեմ, ես էնպիսի մարդ եմ, որ եկեղեցու մէջ քահանայ եմ, դուքսը նոյն քէփ անող աշխարհականը»: Տէր հօր խօսքին ապացուցանում էին նրա գէմքի անհոգ արտայայտովթինն ու քթի տակ երգած՝ «Ըունեակ գիշերը»: Ամրոջ գաւառում Տէր-Սարգիսը յայտնի է իրեկ լաւ հմայող. շար լիզուները զանազան բաներ էին պատմում այդ քահանայի հմայովթինների և քաջարպարտովթինների մասին: Ճնորհակալովթին յայտնելով տէր հօրը՝ գիմեցինք դէպի մտիկ բլրակը և հանգստացամք ծառերի ստուերի առակ. այդ միջոցին կառքերով ուխտատեղի հկան Լոռու գաւառապետը, ոստիկանապետը և ուրիշ պաշտօնեաներ՝ իրենց ընտանիքներով: Մեր նստած տեղից մի փոքր հետո ճաշում և զուարձանում էին Ջալալօղում եղած զօրագնդից մի խումբ հայ զինուորներ. մեղ տեսան թէ չէ հրաւիրեցին մասնա-

կից լինել իրենց սեղանին. մենք չնորհակալովթին յայտնեցինք և շմօտեցամիք. սակայն նրանք այնքան թափանձեցին, որ դատախարակի թուլաւովթեամբ մօտեցամիք նրանց սեղանին, մի մի կառը մաստաղի մին և կէս կէս բաժակի գինի վայելելով բաշեմաղթութիմներ արմիք և վերագարձանք մեր տեղը: Այդտեղ բատականին երկար սպասեցինք, որովհետեւ ճաշին հրաւիրուած էինք Գեղար հայր սուպրի մօտ, իսկ նա իրեկ Լոռուայ գործակալ—դբարուած էր «էրէներ և մատաղի մորթիներ հաւաքելով: Թէ որ. Նարզիս ովաստական մատաղու և թէ մատաղի մորթիներից գոյացած արդինքը պատկանում է ներգախան գլուխնոցին: Ամեն տեղ, հայ գիւղերում, աւանդական սովորովթին է, որ մատաղի էրին և մորթին կամու յանձնուում են քահանային կամ երեցիսինին. Լոռեցիք կարծեն թէ սիրով չին տալիս այդ բաժինը և գործակալը շատ անգամ ստիպուած էր լինում՝ մարգակը ձեռքին ներկայանալ մատաղատիրնը: Հարիւրի շափ մորթի էր հաւաքուել և հատը 15 կոպէկով ծախուել: Վերջապէս եկաւ հայր սուբրը և ժամը 2-ին անցանք ձորակի միւս կողմը, ուր բուրուովին ազատ էր ովաստաւորների աղմուկից. «ուրթ»ի մօտ եղած ծառի հովանու տակ գուեցինք կապերաները, շուրջը նստեցինք և փափուկ հացն ու լօչն ուղղակի կապերաների վրայ զրինք. աման ստուած բանը գոյութիւն չունէր մեր սեղանի վրայ, լօչն ու տերեններն էին բանում զրա տեղը: Էրէների «Խաղաման», խորվածը, պանիրն ու մածոնն էին մեր միւս ճաշի համաղամները: Ճաշն ուրախ անցաւ:

Մեր ճաշած տեղից քիչ վերև գտնուում էր Կուրդան գիւղի «րինան» կամ «եալյան»—ամարանոցը: Մերնից շատերը քաղաքացինք լինելով՝ շգիտէին, կամ աւելի լաւ է ասել՝ չին տեսել՝ թէ ինչ է «եալյան», «գագեան» կամ թէ լինչպէս են պատրաստում պանիրը, իւզը և այլն: Այդ պատճառով ահն զաստիրակի խրնդրանօք մեղ հետ եղող Կուրդանի քահանան յանձն առաւ տանել մեղ «բինան» և ցոյց տալ բոլորը:

Դարունը բացուելուն պէս գիւղացիներն իրենց տաւարն ու ոչխարի հօտերն առած՝ բարձրանուում են լիռնային ամարանոցները, որնց նրանք անուանում են «փրթ», «քինա», «եալյա», «եալյագ» և «ապր»: Գիւղի համայնքը կամ մի քանի տուն միասին վերցնուում են ապքունի կամ մամնաւոր կալուածներից որոշ տուրքով արօսներ և կոչում իրենց «սար»ը: Սարըցիք կամ սարուորները շինուում են իրենց բնակութեան համար վրաններ, որոնց մէջ անց են

կացնում ամբողջ ամառը: Այդ վրանները կոչում են «ալաշուխ» կամ «գագեայ», առաջինն աւելի մեծ, կամունաւոր և գեղեցիկ է քան դպեան: Երկուսն էլ ծածկուած են հաստ թաղիքով՝ այնպէս որ անձրեսի ջուրը ներս չէ թափանցում: Արաշտիք հետեւալ կերպով են պատրաստում, զետնին խոփում են մի բաւականին հաստ սին, սիւնից մի քանի արշին հետաւորութեան: Վրայ շրջանածի գետնին ամբացնում են ամուր ձողեր, այդ ձողերի ծայրերը բերում ամբացնում են սիւնի ծայրին եղող հաստ տախտակից և այդպիսով ձողերը կազմում են մի կիսազունա, սրի գրուստ ծածկում են հաստ և անթափանց թաղիքով ու թողերով պինդ կատում՝ անձրեից ու ցրախց ապահով պահելու համար: Ներքեից շրջապատում են եղեգնեաց ցանկապատով և մի անցք էլ թողնում են մուտքի համար՝ իրեն գուռը: Դապեան նայն ալաշուխն է՝ միայն աելի հասարակ, աւանց սիւնի և առհասարակ հիւսած է լինում ճիւղերից:

Հայ գիւղացիները զլխաւրապէս երկրագործութեամբ զրադած լիներիվ ամբողջ ընտանիքով չեն դնում «աար», այլ միան ընտանիքի մի քանի անդամները—զլխաւրապէս կանայք: Ենասնապահութեան ասպարիգում հայերը յետ են մնացել թուրքերից, համարեա թէ ամբողջովին վերջիններիս ձեռքն է պանրի և իւղի արտահանութիւնը: Լուսայ արօնները շատ յարմար են անսանապահութեան համար և մեծ օգուտներ կարող են առաջ կանոնաւոր գիւղանսեսութեամբ պարապուներին: Լալուար և նրա մերձակայ սարերի արօնները ոչնչով յետ չեն մնում Զուիցերիայի աշխարհաշոշակ «ալմ»-երից:

Վրանների արտաքին դիմուլութիւնը վերջացնելուց յետոյ՝ մտանք աէք-հօր վրանը և անդաւրանեցանք գոյնզգոյն թելերից գործուած զորգի վրա: Ամենից շատ հետաքրքրուում էինք իմանալ՝ թէ ինչպէս են պատրաստում «ջիլ» կոչուած պանիքը, որ ամենազործածական պանրի տեսակն է այս կողմերում. մեր հետաքրքրութեանը գրացումն ատալու համար Տէր-Եփրեմը հրամացեց հիւնց միք աշքի առաջը պատրաստել «ջիլ» պանիքը. աանտիկնը վերցրեց սերը քաշած կաթը, եփ տուեց, մէջը «մայեա» զցեց և երբ հեղանիթը մակարուեց՝ սկսեց այնքան հարել, մինչ որ սատցուեց մի տեսակ մածուցիկ հիւթ. յետոյ ձեռքով երկար ձեւ տուեց նրան, ջուրը քամեց, որպէսզի չորանալուց յետոյ աղ անէ և պահէ: Ջիլ պանիքն այնքան էլ համեղ չէ: Պանիքը զլխաւրա-

պէս պատրաստում են դալնւան ամիսներում, իսկ ամառը՝ իւղ, որովհեան առաջին ամիսներում կաթն աւելի նոր և ջրալի է լինում, իսկ ամառը թանձր և իւղալի: Սովորական պանիք շննելու համար վերցնում են «գոր» կաթը, մէջը ձգում են որոշեալ շափով «մայեա». կաթը մակարպուում և ստացուում է պանրաձև զանիքած, որից ջուրը մղելով և մի փոքր տաք տեղ զնելով ստացուում է «զլխու պանիքը»: Մայեան պատրաստում են ոչխարի կամ հորթի ստամնրի վրայ գտնուած ճարպացին փառից՝ հետո խառնելով զանազան թթու համեմունքներ. այդ բոլորն ածում են կճուճի մէջ և բերանը փակելով դնում են տաք տեղ. մի քանի օրից յետոյ արդէն պատրաստ է լինում «մայեան»: Մածուն պատրաստելու եղանակն աւելի պարզ է, կաթը եփի տալով թողնում են մինչ շի գողջանալը և ապա զրայ մէջ ձգելով մի զգալ հին մածուն՝ երեսը ծածկում են և թողնում. մի քանի ժամից յետոյ արդէն պատրաստ է լինում մածունը: Իւղ պատրաստելու համար՝ «հաւաքը» — մի քանի օրուայ հաւաքուած մածունը — ածում են խնացու մէջ, որ մի որեւէ տեղից կախուած է լինում և սկսում են հարել՝ հետադեաէ մէջը քիչ զայջ ջուր խառնելով, իսկի թշմիները զորս են զալիս թանի երեսը և հետադեաէ շատանալով ու հաւաքուելով կաշտանում և կատր կատր իւզ է զառնում: Ագ կաշտերը հաւաքելով քամում են, որ թանից լաւ մաքրուի, լուանում են ջրի մէջ և աղ անելով պահում տկրի մէջ: Թանը եփ են տալիս, քամում և սամնում են «ժամիկ» կամ թէ ջուրը քամելով չորացնում են և սամնում «չորաթան»: «Սերը» տաքացրած կաթի սերացած երեսն է, իսկ «արաժանը» հում կաթի երեսը, իւղալի ու թանձր մասը:

Աս զիտուաթիւններն ու նկատովութիւններն անելով մեր յիշատակարանի մէջ՝ «գաթայ»-ով թէյ իմոցինք և մեր սրանց շընորհակարութիւնը յայտնելով «ապառուներին», ճանապարհ ընկանք գէպի Վարդարլուք զիւղը, մեր իջնանը: Աւխտաւարները ցրուել էին և առնն ինչ խարազ էր. ամսնալաւ ապառութեան ներքոյ վերադանքնը զիւղը՝ զմայլուելով երեկոյեան վերջալուսի շքեղ տեսաբանով և շրջապատով ընութեան գրաւիչ տեսպով: Գիւղը բաւական զիւղեցիկ տեղ է շինուած, մօտակայ զիտակը զիւղի անունը է կրամ: Ծնակիչները բոլորն էլ հայ են և պարապում են երկարութեամբ ու անսանապահութեամբ. ունի քարաշն եկեղեցից և ազգիւր, որ վերջին ժամանակներու է շննուած: Գիւղի անե-

մից շատերը քարաշէն և տանիքաւոր են: Այս գիշեր էլ մնալով այս զիւզում՝ առաւօտը վաղ պէտք է ճանապարհ ընկնենք՝ դէպի Լոռի բերդը, երբեմն Դուգարաց աշխարհի մալրաքաղաքը:

Լոռի, 29 յուլիսի, երկուշաբթի:

Առաւօտեան ժամի 6-ին արդէն թէյն խմել և գոյգ-գոյգ պատրաստ կանգնած էմնք. դաստիարակը բոլորին կողմից չնորհակալութիւն յայտնելով մեզ հիւրասիրողներին՝ ճանապարհ ընկանք դէպի Լոռի բերդը, որ այժմ մի մննշան զիւղ է: Գեղեցիկ առաւօտ էր. արկը շուտ շուտ թագնուում էր ամպերի տակ, ճանապարհորդութեան յարմար օր էր, ամեն տեղ գուարթութիւն, ամեն տեղ ծաղիների անուշահոտութիւն է բուրում: Անցնում ենք գաշտով՝ անլուդհատ երգելով և նուագելով: Երկու ժամաշափ ճանապարհ անցնելուց յետոյ՝ հասանք սուս գաղթականների նիկոլայելա գիւղը. այս գիւղը կանոնաւոր գծով փոստցներ և կարգին սներ ունի. շրջակայ ընդարձակ տարածութիւնը ծածկուած է արեածաղկի և կաղամբի ցանքսերով: Նիկոլայելայի հիւսիսային կողմից անդնդապար ձորի միջից հոսում է Զորագեաը՝ արեամուտից գէպի արեեր. գետի միւս ափին արդէն երեւում են աւերակ բերդի կիսաւեր աշխարհների ծայրերը:

Նախկին մալրաքաղաքի մնացողների տեսքն արդէն բաւական էր ամբողջ անցեալը մեր երեսակայութեան մէջ զարթեցնելու. աշքիդ առաջ կենդանանուում է կարծես Գուգարաց աշխարհի տէր, Ազգաւանից թագաւոր Գուրիթ Մնողինը՝ ամենի ձիու վրայ նաստած և թիվնապահներով շրջապատուած՝ զիւում է այդ ժայռերը՝ վրան բերդ շինելու նպասակով. արդէն տեսնում են բերդը կառուցուած և իշխանական մայրագարդք դարձած: Աշքիդ առաջ կենդանանուում է անհ Լուսուայ դժբաղդ Կիւրիկէ թագաւորը, որ իր դուստրը թշնամու, Ալիասլանի ձեռքն է տալիս՝ իր հայրենիքը կործանումից և աւերութիւն ազատելու համար: Մատրիւում ես այդ քաղաքում կաղմուուծ եկեղեցական ժողովը՝ «շարժական սեղան»ի և այն ինդիբների առթիւ. աշդտեղ է և այդ ինդիբների յարուցանողը, Զաքարէ տպասալարը. անհ կարծես թէ լուսմ ես Խաչատուր Տարօնեցու առաջին անդամ այլտեղ երգած «Խորհուրդ խորին» հոգեշունչ տալը...: Վէրջը—Քաղաքը պաշարում են թշնամիները և ամեն բուպէ սպառնուում ամենին կոստրել և ամեն բան տակն ու վրայ անել: Մեծ իշխանը յանձնելով քաղաքն իրենից թոյլ իշխանների

ձեռքը՝ փախչում, թագնուում է մի այրի մէջ. թշնամին կործանուում է քաղաքի պարիսպները. ժողովուրդն այրաբար կուում է, բայց թշնամին շուտով աւերում է քաղաքը և անինայ կողոպատում կոտորում է ամենին: Ծուխն ամպերի պէս է երկինք բարձրանուում. գետի երեսը մարդկանց դիակներով է ծածկուում, մեռնողների ճիշն ու ողբը երկինք է բարձրանուում...: Ամայի բերդ, խորտակուած ոյժ, սրտաճմիկ տեսարան. տեղ տեղ զուրս ցցուած աշտարակներն ու շնչքերի մնացորդներ տեմնելիս և երևակայութեամբ անցեալը մտաքերելիս՝ մարդ չի կարող շզգացուել, չարտասուել...:

Նիկոլայելա գիւղից գէպի Լոռի երկու ճանապարհ կայ. մէկը դաշտով, որ ահազին պատոյա է, իսկ միւսն ուղղակի ձորի միջով, որ բաւական գժուարագնաց է. մենք ընտրեցինք վերջինը և ընթացքներս ուղղեցինք գէպի ձորը: Անցնելով մի ընդարձակ և երեսը մամուապատ ճահճանման լճի մօտով հասանք ձորի գլուխը և մի հայ ճանապարհորդի ցուցմամբ՝ իջանք մի նեղ շաւով գետի ափը և կանգ առանք: Զորագետը փրփուրը բերնին, աղազակելով ու մնաշելով արագ վազում է նեղ ձորի միջով և այնքան խորն է, որ ուաքով անկարելի է անցնել, իսկ կամուրջ էլ Աստուած տայ, թէ կ երբեմն եղել է կամուրջ, որի հետքերն երկում են: Չուարած կանգնած ենք գետափների ժամաների վրայ. ոմանք փորձում են ուաքով անցնել՝ չի լինում. լողալ էր բալուր չգիտեն: Մեր բաղդիցն այդ միջոցին հասան երկու ձիաւորներ և բոլորի հերթով անցկացըն ջրի միւս ափը: Մեզնից մէկի գետն անցնելու միջոցին՝ գաստիարակի շախ ընկաւ ջուրը և արագ ցած էր իջնում գետի ընթացքով. մեր ընկերներից մէկը, որ լողալ գիտէր, իսկոյն զգեստներով ընկաւ ջուրը, հասաւ, բռնեց շալը և մեր կեցցէների աղմուկով խացած՝ զուրս եկաւ ափը: Դաստիարակը զեր յանդիմանեց նրան՝ զգեստով ջուրն ընկնելու առթիւ, որովհետ զգեստները կարող էին արգելք լինել լողանալուն և նա գետի արագընթաց հոսանքից յաղթուելով՝ կարող էր խեղդուել. բայց միւս կողմից գովեց նրա արիութիւնն ու քաջարստութիւնը և պատուիրեց իսկոյն հանել բռնոր թաց զգեստները և պահեստի տաք չորիրը հագնել:

Գետի միւս ափին անցնելով սկսեցինք բարձրանալ գէպի բերդը. ժայռերի վրայ երեսում էին բուրգերի հետքեր և ամբութիւններ. արեելեան կողմից հոսում է Միախանայ ջուր կոչուած զե-

տակը և միանում Զորագլուի հետ: Այս ձարն էլ զետակի անունով կոչում է Միսխանայ ծոր:—Միսխանայ պարսկերէն նշանակում է պրիմադանար և երեխ այս ջուրն էլ այդպիսի մի համբի մօտով կամ միջով անցնելով՝ այդ անսունն է սուացել: Զորագետի և Միսխանայի միանալու տեղն եղած շափող կոչում է ջրպողի մանապարհ, որ մի գաղտնի անցք է բերդի միջից: բերդը պաշտուած ժամանակ երեխ այցուեղից են ջուր կրելու եղել: շաղի մուտքը ապահովացրած է ամուր բուրգով: Այդ մուտքի դիմացը, գետի միւս ափին երեւմ են մօտ եօթը ջրազացների հետքեր: Զորագետի աջ կողմը, ժայռի մէջ երեւմ է մի մասրածի շինուածք: աւանդաբար պատմում են, որ այդպես ապրելիս է եղել մի ճգնաւոր և շարունակ արքայի համար ազօթելիս: այդ ճգնաւորը զիշեր ցերեկ աշխատելով՝ այդ ժայռերի մէջ առուներ է փորել և գետից ջուր տանելով՝ այդպես ազգարակ է տնիկել:

Նոյն կողմը, ձորի մէջ, Միսխանայ գետակի աջ ափին, լիբան տակից բդիսում է մի առատարուղի ազդիւր, այս կողմերում եղածներից ամենալաւը, իր պարզ ու վճիռ ջրերը նոյն խոկ հեռուից բիւրեզման փայլեցնելով՝ այդ ազդիւրը ժողովրդից առացել է «Հուսալրիւր» անունը: Զորից բարձրանալով՝ նախ հանդիպում էր առաջին պարսպին, որից քիչ հեռու գտնուում է երկրսրդ պարիսպը: այս պարսպի մէջ, աջ կողմը, բացուած է այն կամարակապ անցքը, որ դէպի դուրս է տանում: Մուտքի վրայ գտնուում է ոլ պրակերէն լեզուով՝ մի արձանագրութիւն, որից որոշուում է միայն «զալա» (բերդ) բառը:

Ժամը 9-ից քիչ անց էր, երբ մասնի բերդի արևելեան այդ կամարակապ մուտքից և մի փոքր հանգստացանք հիւսիսային միծ մուտքի կումբը շուաքի տակ: Տիտուր և ճնշող ապաւորութիւնն է անում մարգու վլայ՝ երբ բերդի մուտքից ներս նաշելով՝ բացի կիսուեր աշտարակներից և աւելակ մատուներից ոշինչ շես աեսնում: այդ փուաւոր քաղաքից, որ իր ճոխութեամբ և զանձերով թշնամու արծաթսիրութիւնն ու նախանձը շարժեց, բացի մեծ-մեծ քարագուտերից ոշինչ չէ մնացել: Քառ կարելի է այդ աւելակներն էլ ոշիչացած և Լոսին էլ Արմաւրի ու Արտաշատի նման հոգաբուրներ միայն դարձած լինէին, եթէ լինէր զբա անառիկ գիրքը և բնապիտեան բնական պաշտպանութիւնը: Բերդն, ինչպէս երեւմ է, ձափ կողմից էլ կամարակապ մուտք է ունեցել, որից այժմ մնացել են միայն կամարմների հետքերը:

Բերդն անառիկ է, արևելքից, հարաւից և հարաւ-արևելքից շրջապատուած է անդնդախոր ձորերով: արևելեան կողմը Դէքէտի ձորն է, այսպիսով բերդն երեք կողմից ամրացրած լինելով բնական անդնդախոր խրամատներով, միան անսպաշտպան կարող էր մնալ հիւսիսից, որովհետեւ զաշտ է և ազգափառ մատչելի: ահա այդ կողմից էլ բերդն ապահով դրութեան մէջ են զրել՝ կառուցանելով հաստ պարխապներ՝ բարպերով և աշտարակներով: Մարդ տիսնելով բերդի այսպիսի ամսարիկ կիրքը, ամուր, երկիրար պարփառների հետքերն ու աշտարակները, երեք կողմից նրան շրջապատող ձորերն ու ժայռերը՝ զարմանում է թէ ինչպէս է կարապացել թշնամին մուտք գործել և աւելիու բայց ինչ արած, երբեմն իշխանների թուլառթիւնը, մողկուռթիւնն ու վախկասաւթիւնը պատճառու են լինում նոյն խոկ ընափան ամբաթեանց կործանման: Ահա թէ ինչպէս է նկարագրում Կիրակոս պատմագիրն աս բերդի տեսքումը:

2ազատայ թաթարների զօրավարը՝ լսելով Լոսի քաղաքի ամբութեան, նրա ճոխ հարսութեան և զանշահ իշխանի ահապին գանձերի մասին, առնելով իր հնա ընտիր սպատագիններ և բազմաթիւ մաքենաներով ու պատրաստավթեամբ գալիս պաշարում է այդ քաղաքը: Խոկ զանշահ իշխանը լսելով այդ՝ առնում է իր կինն ու սրբիքը, գաղափարի վախչում է ձորը և ամբանում մի այլի մէջ քաղաքը յանձնելով իր ստորագրեալ իշխաններին, որնոր կանացի և թոյլ մարդիկ լինելով իրենց յայը պարիսպների ամբութեան վրայ զրած փոխանակ թշնամուն դէմ զնելու՝ պարապած էին արքեցողական մարդու և զելլութեամբ: Թշնամին վլցնուում է պարիսպների ներքին մոսը և ներս խուժում: քաղաքի բնակիչները անպաշտպան մնալով երբ տեսնում են թէ քաղաքն առնուած է վայի մարդկանց, կանացի և մանուկներին, կրանց ստացուածքն աւարի է առնում: Գունում են և զանշահ իշխանի գանձերը, որ պահուած էին մի առանձին ամուր շինութեան մէջ, որի բերդն այնքան նեղ էր, որ միայն փող ձգելու համար էր բաւական, իսկ հանելու—ոչ: Թշնամին կոտրում է նոյնպէս զանշահի իշխաններին, որոնց յանձնուած էր քաղաքի իշխանութիւնը և զիմում գէպի ուրիշ նշանաւոր բերդի և քաղաքներ, որոնցից շատերն առան երրիմն բնապիտեամբ և երբեմն էլ խարէութեամբ:

Բերդի հիւսիսային կողմը, ատփարակ տարածութեան վրայ

երեսում են բազմաթիւ տների հետքեր. այդ վայրը կոչում է «Աղշահար»—սպիտակ քաղաք—և երեխ քաղաքի թաղերից մէկն է եղել: Քերդից գէպի արեւելահարաւ, այժմեան նիկօլայեւկա գիւղի տեղը մինչև ձորի գուլքը կոչում է «Ամրակից»—երեխ ամրոցին կից:—Քերդի արեւելքից-արևմուաք ձգուող պարսպի երկարութիւնը 300 արշին է, իսկ լայնութիւնը 21 արշին 11 վերշոկ: Պարսպի աջ գրան լայնութիւնն է 5 արշին 9 վերշոկ. մուտքի բուրգի բարձրութիւնն է 13 արշին: Արտաքին պարսպի աշտարակների մէջ եղել է մի եկեղեցի, որ այժմ բոլորովին քանդուած է և համարեած թէ ամբողջովին աւելուած:

Արեւելան պարսպից ոչ հեսու գտնուում է մի փոքրիկ, անսին, կամարակապ և սրբաւաշ քարից շինուած քառակրուի շնչք 5 արշին և 13 վերշոկ մեծութեամբ. այդ շնչքը թէ դրսից և թէ ներսի կողմից կառուցւած է եղել սրբաւաշ քարերից, բայց այժմ դրսի պատերի քարերը բոլորը քանդել ու տարել են՝ երեխ շինութիւնների համար: Արեւելան պատի վրայ կամ երեք կամարակապ խորաններ, որոնք երեխ պատարազամատոց խորաններ են եղել. աւանդութեամբ այս շնչքը համարում է Դաւիթ Անհողին թագաւորի կնոջ զամբարանը: Պատմում են, որ երբ թագաւորները տիրում են քաղաքին՝ քանդում են այդ գամբարանը՝ գանձ կամ թանկագին իրեն գտնելու յուսով և ոսկեները հանելով՝ այրում են: Այս շնչքի մուտքի աջ կողմի մի քարի վրայ գտնուում է մի եղծուած արձանագրութիւն, որից որոշում է միայն թուականը. «ի թըուին 2»—(700 հ. թ. 1251 փրկ. թ.): Յիշելով այն աւանդութիւնը՝ թէ Խաչատուր վարդապետն այս եկեղեցումն է առաջին անգամ երգել «Խորհուրդ խորին»—մենք խորին ակնածութեամբ և հոգեկան վրդովմուրով երգեցինք այդ սրբազն վայրում «Խորհուրդ խորին»ը և մեզնից շատերը արտասուրն աշքերին դուրս եկան:

Քերդի արեւելան կազմը, ձորի գլխին, եղել է մի ընդարձակ եկեղեցի, որից մնացել են պարիսպների մնացորդները և մի քանի խաչքարեր: Խոր հարաւային կողմը, ձորի գլխին, ձիթահանքի հաեքեր են երեսում, որոնց ահազին քարերը ցայժմ էլ մնացել են: Նոյն կողմն է գտնուում և այն մեծ այրը, ուր, ինչպէս աւանդարար ասում են, ամբացել է ձահնշահ իշխանը: Ամրոցի հարաւային կողմը գետի ընթացքը հանդարտ է. այդ տեղը կոչում է «Խանգել»—խաների լին—ասում են, որ իրրե թէ երբ բերդն ընկնում է, թուրքիրի իշխանութեան ներքոյ, խաները մաքրել են ատլիս

գետի այդ մասը քարերից՝ լողանալու համար: Նոյն կողմն են գլունուում այն կամարաձև շինութեան հետքերը, որի որմերի մէջ զբանաւած են աւազանանման ի որաններ. որմի մէջ շինուած են կարսից շինուած երկիւրդ խողովակներ. թէ ըստ ձեր և թէ ըստ աւանդութեան՝ այդ խորանները համարուում են բազանիքներ. Ծուրը բերդի տակից իրրե թէ գալիս է եղել վերոյիշեալ խողովակներով: Բազանիքի ճանապարհին մի քանի տեղ պատահեցինք սանդի նման մէջը փորուած մեծ-մեծ քարերի, որոնց մէջ իրրե թէ վատօղ են պատրաստելիս եղել:

Բաղանիքից 5—6 սաժին հեռու, բերդի նոյն կողմը, գտնուում են մի շնչքի հետքեր, որ ըստ աւանդութեան՝ թագաւորական պալատ է եղել. շնչքն ուղղակի ձորի գլխին է, գեղեցիկ զիրք և բաւականին ընդարձակ հորիզոն ունի: Այդտեղից զիմեցինք գէպի գիւղի այժմեան եկեղեցին, որ գտնուում է բերդի հիւախային պալատի մօտ և երկու սիւների վրայ հաստատուած մի կամարակապ շինութիւնն է 9 արշին, 3 վերշոկ լայնութեամբ և 16½ արշին երկարութեամբ: Այս շնչքը վեց զմբէթներ ունի, որ շինուած են աղիւսից՝ թէ որմերն ու կամարները սրբաւաշ քարից են: Այս շնչքը սկզբուում երեխ ուրիշ նպատակի է ծառայելիս եղել. վերջերը թուրքերը տիրելով՝ գարձերել են մզկիթ, իսկ այժմ եկեղեցի են գարձերել՝ ցածր բեմով և աղքատ սեղանով: Գիւղն առանձին քահանայ չունենալով (բաղկացած է 26 տնից) մօտիկ Լեջան գիւղի քահանան է հովուում սրանցը և պատարագ մատուցանում այս սրբավարում:

Եկեղեցու հիւախային կողմը գտնուում են երեք կամարապ խորաններ, որոնցից միջին կամարի տակ գտնուում է եկեղեցու զուռը և մի գեղեցիկ քանդակուած խաչքար՝ սև քարից շինուած: Հիւախային պարսպի տակ աւազան է եղել, բայց այժմ բոլորովին լցուած է հովով և ոչինչ չէ երեսում:

Այս գիւղութիւններն անելու միջոցին բաւական յովնելով՝ սիրով ընդունեցինք տեղական երեցփոխի առաջարկութիւնը՝ մի փոքր հանգստանալու իր յարկի տակ. մեզ հետ էր նաև Լեջանի Տէր-Մարգիս քահանան: Լոռուայ գիւղերից շատերում գիւղացիներն արգէն սկսել են զուրս զալ գետնափոք որջերից և գետնի երեսին քարուկրից տներ շինել. վերջին տեսակին էր պատկանում և երեցփոխի տունը: Բաւականին մաքուր և լուսաւոր սենեակում տեղաւորուեցանք՝ մի մասը հողէ յատակին փուած կապերանների և միւս

մասն էլ թափառի վրաց, որ գիւղացաւ տան ամհրաժեշտ մասն է: Նստեցինք թէ չէ, մեր ուշագրաւթիւնը զբանեց «բաւխարու» ճակատին դրուած մեծ քարը, որի վրայ արձանագրուած էր. «Այս է հանգիստ տիկնոջն... լիշեցէք ի Քս. ի թուրին 21.Բ»—(732—1283): Մեր հարցմանը՝ թէ նրանքից են բերել այդ քարը, տանտէրը կարճ պատասխանեց—գերեզմանանից: Տանից գուրս եկաւ, որ գիւղացիները նոր աներ շնուրված անխնայ կերպով տանում են բերդի աւերակների ու գերեզմանների սրբատաշ քարերը և անարգել գործ դնում: Նոյն խակ Զալալօղուց եկել և աւերակների քարերից տարել են... տէր չկայ, տիրական չկայ... խեղ զա մեր նախնիք և աւելի ևս թշուռու ու տգէտ հայրենակիցներ: բաւխան չէր արիւնաբրու թշնամու սուրին ու հուրը, որ մեր ձեռքալ էլ ենք աւերում մեր սրբաւթիւններն ու նախնեաց սրբազն լիշատակները...:

Ընորհակալութիւն յայտնելով մող հիւրասիրողներին՝ ճանապարհ ընկանք գէսվի բերդի պարիսալը, ուր թողել էնք մեր իրեղները: Ճանապարհին տէր-Սարգիսը մեր ուշագրաւթիւնը գարձրեց բերդի մուտքի աջ կողմը գտնուուղ մի հնութեան վրայ: այդ չնքը բաղկացած էր երկու կամարակալ սենեակներից, որնք միմեանց մէջ են քացաւմ: որմերի մէջ երկում են երկիրազ կաւեյ խողովակներ, խակ տանիքը բարկացած է երկու զմբէթներից: Այս չնքը բալորովին նման է բերդի հարստացին կողմը զրտնուած և բաղանիք համարուած չնքին և երկու նոյն նախատակնին է ծառայելիս եղել, այս զմբէթապարդ շնութիւնն այժմ ամրարի անդ է ծառայում գիւղացիներից մէկին:

Հասնելով բերդի մուտքին՝ նշանակեցինք ծանրաշափի (բարօմետրի) դիասոգութիւնը—Լուսին գտնուում է ծովի մակերևոյթից 1490 մատր բարձրութեան վրայ—և ուղում էնք չափել նոյնուկս օգի ջերմութեան աստիճանը, բայց ջերմաշափն էլ իր տեղը չը գտնուեց, գիւղի երեխաններն իրենց անծ ամօթ այդ իրն երկի թանկագին բան համարելիք վերցրել տարել էնք: մեր երկու «աստղաբարձրչներն» էլ ի հարդէ նկատողաւթեան արժանացան իրենց այդ անդգուշութեան համար, որի հետեանիները շատ զգալի կիմէին եթէ գտատիրակի մօտ չգտնուէր պահեստի ջերմաշափի: Թէպէտք իսուսացաւ ջերմաշափը գտնել և Զալալօղի ուղարկի, բայց մոնք այլ ևս տեղեկութիւն շատացանք այդ մասին:

Փամի մէկ և կէսին թաղնելով Լուսուայ աւերակները՝ ախուր տպաւորութեան ներսոյ ճանապարհ ընկանք գէսվի Զալալօղի: ան-

յանք գերեզմանանով, ուր կային բազմաթիւ խաչարերի պատուանկաններ, իսկ խաչարերն անյայտացել էնք: Մեզ ընկերակցող քահանան, կէջանի ծխաւէը, մեր չորհակալութիւններն ընդունելով բաժանուեց մեղնից և զնաց իր գիւղը: Զալալօղին հեռու չէ Լուսուց, ընդամենն երկու ժամուայ ճանապարհ է: անցնուում ենք հնձած արաերի միջով: Արեգակն այրում էր, բայց բարերադղաբար զոլ քամի էր վշում և արեգակի տապի անզգալի գարձնում: Անցորդներ չէին պատահում: Հեռուից Զալալօղու տեսքը շատ գեղեցիկ է, թէկ աները խառն ի խուռն են դասաւորուած: Ժամի երեքն էր, երր Զալալօղու ձորն իջանք, որ լիքն էր զինուորներով: Ուղղակի ձորի զիլին գտնուում է գիւղաբաղադրի որ: Սստուածածին եկեղեցին, որ եօթը սարուայ չէնք է, բարձրանալով ձորի միջից՝ նասեցինք այդ եկեղեցու գաւթում՝ մի փոքր հանգստանալու: Մեր անսովոր հագուստի ձևն իր վրայ էր զարձնում անցորդների ուշագրաւթիւնը, որոնցից շատերը զիմում էնք և հարցնում թէ նվերեր ենք: ամենից շատ մեղնով հետաքրիստում էնք հայ զինուորները, դրանցից երկուու մօտեցան մեզ և խօսակցութիւն սկսելով յայնեցին, որ Արցախի կողմերիցն են: ծանր էր թւում նրանց զինուորական ծառայութիւնը՝ թէկ հրացանագութեան արհեստում—իրենց ասելով—առաջին մրցանակներն իրենք կին սասցել:

Կէս ժամ գաւթում սպասելուց յետոյ՝ մեզ իմացրին, որ բնակարաններս պատրաստ է: բազարի միջուղ անցնելով հասանք մեր իջեանը, մեզ հիւրասիրով Յարութիւններն ազգանունով մի պատուական ընտանիք էր: դրանց ազգական երիտասարդ պ: Արշակ Պատիկանը առաջնարկեց մեզ մի կէս-երկուսպական և կէս-տսիփական ճաշակով կահաւորուած սենեակ, ուր և հանգստութիւն տուինք մեր խնջացած անդամներին:

Ժամի օ-ին երկինքը պատուած էր մութ ամպերով, որ սաստիկ փոթորիկ էր գուշակում: շուտով սկսեց անձրի տեղալ, որ քանի զնում—սասականում էր: Անձրին հետ միացաւ սաստիկ հողմը: ուժգին քամին խոնարհնուում էր ահապին ծառերի կատարներն և կարծես սպառնուում էր արմատահան անել նրանցը: անձրիը հեղեղի նման էր թափուում երկնիքից: Երկինքը ու գեանին կարծես տակն ու վրայ էնք լինուում: զուտով փոթորիկն անցաւ, բայց անձրիք շարունակում էր տեղալ: Սասակի փոթորիկը պակել ու ցած էր գցել որ: Սստուածածին եկեղեցու զմբէթի խաչը և բա-

ւականին ծամր իրել օվը բարձրացրել և հեռու տեղեր չպատել:

Մեզ հիւրասիրող երկու պարոնները գնացել էին ուռկանով ձաւկ որսալու. նրանք թէի որսով ծանրաբեռնուած վերադարձան, բայց սասափիկ դրշուել էին. գնացուց աւաշ նրանք մեր անոններն ու որսեղացի լինելը հարցնելով՝ իւրաքանչիւրիս բաղդին ուռկան էին ցցել. թիֆլոցիներն անբազդ էին դուս եկել. էրզումցին, թարիզցին, ափաբալաքցին բաղդաւոր. իսկ երբ ուռկանը ձգելիս բացազանչել էին. «Եա մշեցու սե բաղդ», ամենամեծ ձաւկն էր ընկել դամբի մէջ: Այս զբացներով թէլ խմեցինք, ընթշեցինք և գորգերով ծածկուած յատակի վրայ տարածուելով անուշ քնեցինք:

Հալազողի, ՅՈՒՎԻՍԻ, ԵՐԵՔՉԱՐԹԻ:

Օրն ամպամած է, գուսար սասափիկ ցեխ: Առքով ճանապարհուութիւն և անձրեւ ու ցեխ: Զալազօղում առանձին ուշագուռութեան արժանի ոշինչ չկայ, եղածն էլ տեսել ու նկարագրել ենք Թիֆլոցի—Սանահին գնալիս: Որշում ենք ապասել մինչև երեկոյ և զբաղւում ենք մեր ազգականներին, մերձաւորներին ու ընկերներին նամակներ գրելով: Բոլորիս ստորագրութեամբ երկու նամակ էլ գրեցինք մեր ճանապարհորդութեան պաշտպան երկու հոգաբարձուներին՝ իշխան Կոստանդիին Քեհրութեանին և պարոն Գէորգ Եւանդուլեանին՝ հետեւալ բովանդակութեամբ.

«Ներսիսեան գլարանոցի առաջին «գլարոցական ճանապարհուութեան» մամնակցողները յայտնում են Ձեզ իրենց անկեղծ չնորհակալութիւնն՝ իբրև մեր գլարոցական ուղերութեան պաշտպանի և իմաստակալի: Աւելորութեան ճանակցողներս մանրամասն գիտելով և նկարագրելով Սանահնու վանից հոյակապ եկեղեցական-պատմական հնութիւնները, ամսոյս 27-ին ուղերութեանը դէպի Սերդեաց ձորը, Օձուն, Վարդապուր, սր. Սարգիս և այս աեղից Լուսուայ բերդը և Զալազոլիի մանրամասն գիտելով և նկարագրելով այդ աեղերում գտնուած աղքային-պատմական հնութիւնները:

Բարեբարձրաբար ամեն տեղ համականքով են ընդունում մեզ և հիւրասիրում՝ հայկական նահապետական ստորագրութեան համեմատ:

Ամենքս էլ աւողջ ենք, եռանդով ենք ճանապարհորդում և գիտում մեր հայրենեաց անցեալ փառքի բնկուները:

Այսօր այստեղից ուղերութելով՝ պէտք է պնանք Գիւլագարակ,

Կուրդան, Դսեղ, Արգուի, հիգահատ, Հոռոմայք և ապա Օձունի վրայով՝ կրկին Սանահին: Ընդունեցէք ուրեմն մեր սրտագին չորհակալութիւնը. ինդուում ենք նոյնական թարգման համոլիսանալ դպրանոցիդ մեծապատիւ հոգաբարձութեան առաջ»:

Նամակների տակ ամենիքս ստորագրեցինք՝ մեր տիտղոսներով հանդերձ:

Մինչև ճաշը սպասեցինք, բայց եղանակը շլաւացաւ, ցեխը չչորացաւ. եթէ ուռքով գնայինք՝ շատ կնեղուէինք. Գասափարակը որսեց մինչև Կուրդան գիւղը Փուրգօն վարձել. պ. Միհրամիր, Ներսիսեան ուսումնաբանի նախիկին սամը, որ կարեսու եղած ժամանակը միշտ օգնում էր մեզ, վնաց մի Փուրգօն վարձեց: Ժամի 4-ին սրտագին չնորհակալութիւն յայտնելով մեր սապնջականներին՝ Փուրգօն նստեցինք և երգելով ճանապարհ ընկանք: Մեզ ուղեկցում էր պ. Ե. Զահրաբեանը, որի հետ ծանօթացել էինք Վարդարլուր գիւղումը: Փուրգօնը գժուարութեամբ էր տեղից շարժւում: Անցանք Նիկօլայեւկա գիւղի մօտով, որի գիմացը, ձորի գլխին երեսում էին Լուսուայ բերդի աւերակները: Վերջին անգամ մեր աշքերը գարձրինք դէպի Գուրգարաց աշխարհի մայրագարի մնացողիները և ախուր շարտնակեցինք մեր ճանապարհը: Տեղ տեղ գիւղացիները վար էին անում, անձրից հողը փափկել էր: Երեկոյ էր, երբ մօտեցանք Վարդարլուր գիւղին, մեր «Փուրգօնշին» առաջարկեց այս երեկոյ մնալ Վարդարլուր և վազը գնալ Կուրդան: Բայց մենք ի նկատի ունենալով, որ ընդամենք մի՞քանի վերատ է մնացել մինչև Կուրդան և Վարդարլուր գիւղաւմն էլ արդէն երկու գիշեր մնացել ենք՝ որոշեցինք շարտնակել մեր ճանապարհը:

Մի փոքր անցնելուց յետոյ՝ ամպերն սկսեցին սասափիկ սրոտալ, փայլեց կայծակը, երկմաքը թնդաց և սարսափեւի յարդ անձրեւ սկսեց: Մութն է, բարդովին ոշինչ չենք տեսնում. ձիերը գժուարութեամբ էին առաջ գնում և մի քամի քայլ հազիւ անելուց յետոյ՝ նորից կանգ էին առնում կամ կառքը քարի դէմ ընկնելով՝ բաղնիւներով սպասում էինք, մինչև որ սալլապանը կարողանում էր առաջ քշել: Մենինից շատերն իջան, որպէսզի մի փոքր թեթևանալով՝ կատքն արտօնի, բայց այդ էլ չօգնեց: Մեր շուրջն այսպիսի խաւար էր տիրում, որ ինչպէս ասում են, «մատդ մարգու աշք կրիւեիր, չէր տեսնի»: Երբեմն երկեմն երկմաքը կարծենաւում էր և փայլակը լուսաւորում հորիզոնը, ճանա-

պարհը զժուարութեամբ էր որոշում և եթէ վայլակի. լոյսը չի-նէր, շատ կարելի է մոլորւէինք: Բայց ահա լուսինն երեաց ամպերի տակից, ամենքս ուրախ բացագանչութիւններով ողջունեցինք նրան և համարեա թէ բոլորս էլ իջանք կառքից. սակայն մի բոպէից յետոյ լուսինը նորից ծածկուեց մթաղոյն ամսերով: Կրկին լուսի եզաւ պրոաման ահեղ զգլուինը և անձրել նորից սկսեց հեղեղի նման թափուել մեր գլխին. մենք էլ ճանապարհ շենք հարցնում, որտեղ պատահում է ոտներս կոխում ենք և երեմն էլ ընկնում ցեխախառն ջրի մէջ ու նորից վերկենում, զուարձանալով առաջ գնում. մէկ էլ անսար մէկի արեխը մնաց ցեխի մէջ. հրմա արի ու հանիբը...: Փուրգօնի մէջ նստողներն էլ լաւ օրի չէին. սաստիկ կաթում էր ներար և անձրեից ոչ պակաս դրշում մէջն եղաղներին: Գիւղի աների երեսը դէպի ձորը գարձած լինելով լոյս էլ շէր երեսւմ, որ իմանայինք գիւղի մօտիկ լինելը: Մեծերիցս մի հինգ հոգի, ձեռնափայտերը ձեռքերնիս, առաջ ընկանք և չուտով կանգ առանք գիւղի ծայրին և ձայն առւնի վրայ դուրս եկու մի հասակաւոր գիւղացի և առաջնորդեց մեղ դէպի Տէր-Եփեմի տունը: Տէր-հայրը, որ արդէն քնիլու էր պատրաստում, շալլանց դուրս եկաւ և իմանալով մեր գալուստը, իսկոյն մոմ վառել տուեց և ուրախութեամբ ընդունեց մեղ. յետոյ լսելով մեր փուրգօնի պատմութիւնը, իր որդուն պատուիրեց իսկոյն ընդուած զնալ և ուզիդ ճանապարհը ցոյց տալ:

Կերջապէս ժամի 8-ին բոլորս դրշուած և ցեխուուած հաւաքուած էինք մեր դաստիարակի շուրջը, որ պատուիրեց բոլորին, իսկոյն հանել բոլոր զգեստները և նոր սպիտակեղին հազնել: Մեր բարդեցն էլ՝ այդ օրը քահանացի տանը հաց էին թխել և թոնիրը վաստած էր. շըջապատեցինք թժնիրը և չորսացինք մեր թաց զգեստներն ու վերարկուները: Տէրտէրի ամրող ընաանիքը ուաքի էր կանգնել և օգնում մեղ, բացի երեցինոջ հայր ծերունազարդ քահանացից, որ շարունակ անկողին էր ծառայում: Այն սենեակը, ուր մենք տեղաւորուել էինք, քարից էր շինուած. յատակը հող և պատերն առանց ուռազի. միայն մի ցածրիկ պատուհան ուներ, այն էլ առանց պալակու: Երկու կողմից շարուած սիմերը պահում էին առաստաղը. մի կողմը զբաւած էր հայկական հին թափառ՝ գորգերով ծածկուած, միւս կողմում զարսած էր «տեղաշորերը». պատից կախուած էր հին «այնալու» կաշուած հրացան, իսկ պատի մէջը՝ գիւղական տան անհրաժեշտ մասը, «օջաղը» կամ «բուխարին»: Այդ

ոենեակից մի գուսը բացուամ է դէպի թոնրատունը, որ նոյնապէս քարեայ ընդարձակ չենք է, ուր գտնուում է թոնիրը, փուսը և զա-նազան հին կարասի: Միջանցքից մի գուսը բացուամ էր դէպի գոմը:

Մեր զգեստները չորացնելուց յետոյ՝ մեծ ախորժակով թէ խմեցինք, հաց ու պանրով ընթրեցինք և պառկեցինք քնելու:

Արգուի, 2 օգոստոսի, ուբաթ \*

Առաւուեսն ժամի 7-ին շնորհակալութիւն յայտնելով մեղ հիւրասիրողներին՝ ճանապարհ ընկանք դէպի Արդուի՛ տանե-լով մեղ հետ Դսեղից անջնին տպաւորութիւններ և յիշողութիւն-ներ: Երկինքը պարզ էր. արեւ բաւականին բարձրացել էր, բայց դեռ կանաչ ու խիս ցողաթաթափ խոտերը դրշում էին մեր ոտ-քերը. իջուամ ենք ձորը և դիմում դէպի Քառամնից կաշուած վան-քը. կէս ժամից արդէն հասանք վանքը՝ քարերի ու քուերի միջով ճանապարհուութիւնից:

Քառամնից վանքը շնոււած է Դսեղի գիւղի արևմտեան կող-մը գտնուող ձորի մէջ. այս սրբատաշ քարից կաւուցուած տաճա-րը կամարակալ է, կամարները հաստատուած են չորս կիսասիւ-ների վրայ. կաթողիկէն ամբողջովին աւերտուած է: Պատերից իւ-րաքանչիւրի մէջ, կամարների տակ, կան մի մի լուսամուտներ. բեմի աջ և ձախ կողմը գանսում են երկյարկանի խորաններ, որոնց վերին յարկի մուտքը բեմիցն է: Երաքանչիւր խորանի մէջ կայ մի պատարագամատոյց սեղան: Եկեղեցու մուտքի ճակատին և պատերի վրայ կան բաւականաշափ արձանագրութիւններ, որոնցից երեսւմ է, որ վանքը երբեմն ունեցել է միաբանութիւն, ընդար-ձակ կալուածքներ և այգիներ՝ գտնապան իշխաններից նուիրուած:

Բեմից աջ կողմի խորանի ճակատին արձանագրուած է. (մա-սամբ եղծուած):

«Ի թուին ՈՂ (690—1241) յիշխանութեան Աշոտայ և յա-ռաջնորդութեան Յովհաննիսի եւ Գաւիթ... առաջի ընձարեր շի-նեցի... զմատուուն և սպասաւորին ոորա...»: Եկեղեցու մուտքի ճակատին եղած արձանագրութիւննից երեսւմ է, որ այս սրբավայ-

\*) Այս ճանապարհորդութեան հինգերորդ և վեցերորդ օրուայ (յու-իսի 31 և օգոստ. 1) նկարագիրն արդէն տպուած է մեր «Ներսիսեան դպրոցի սաների առաջին գպրոցական ճանապարհորդութիւնը» գրքոյի մէջ, ուստի և զանց ենք ունում այստեղ:

ըլն օրհնուել է Հաղբատի Համազասպ առաջնորդի ձեռքով 2Ե  
թուին (705—1256):

Եկեղեցու երկարութիւնն է 12 արշ., լայնութիւնը՝ 6 արշ.  
10 վերշոկ, կամարների միջի տարածութիւնն է 4 արշ. 6 վ.:  
Կամարները խաչաձև կարում են միմեանց և նմանութեան Սահանի  
սր. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն, իսկ ընդհանութեան ճարաւաբապե-  
տութիւնն աւելի նման է Յնէվանքին:

Եկեղեցու դիտողաւթիւնը վերջացնելուց յետոյ բարձրացանք  
ձորի միջից: Ճամապարհին տեսանք մի քարայր, որ ինչպէս նշան-  
ներից երևում էր, սկզբումը բաւականին ընդարձակ ոլէաք է լի-  
նէր. այժմ բաւականին ժայռեր ցած գլորուելով այրը կիսով շափ  
բաց է մնացել. ժայռերից մէկի վրայ փորագրուած էր մի խաչ:  
Քարայրը կոչում է «Ճննաւորի այր» և այժմ ենթարկուել է բոլոր  
այգախիսի այրերի վիճակին, այսինքն դարձել է ոշխարների մա-  
զարայ և վայրի կինդանիների որդ: Այրն անցնելուց յետոյ հասանք  
ձորի գլուխը, որտեղ բարձր պատուանդանի վրայ մի խաչքար է  
գրուած: Այդտեղից ճանապարհներս շաբունակեցինք դաշտերի մի-  
ջով և ապա նորից իջանք սր. Գրիգորի ձորը, անցանք աղբեկրի  
մօտով, վերջին անգամ հայեացքներս դարձրինք այդ հոյակապ  
սբրավայրերի և հրաշակերտ աւերակների վրայ ու հառաչելով շա-  
բունակեցինք ճամապարհներս: Դուելից մեզ ընկերակցաղ պ. Յ. Թումանինանն այստեղ բարի ճամապարհ մազթելալ մեզ՝ հրաժեշտ  
տուեց և վերադարձաւ. մեզ հետ մնացին Հովուեան եղբայրները—  
երկուսն էլ ուսուցիչ: Օճապայտ շաւիներով իջնելով տնցանք  
«Քարինջայ ջուր» կոչուած գետակը և գնում ենք անտասի միջով՝  
մերժ իջնելով, մերժ բարձրանալով բլուրները, մինչեւ որ հասանք  
այգեհատ գիւղի «Տրէխուն» կոչուած ձորը, ուր կան բանջարեղին-  
ների աղարակներ և ծխախոտի ցանքսեր:

Նոյն լեռնային գեղեցիկ ընտիւնը, նոյն պճնազարդ ան-  
տառն իր խորհրդաւոր լուսութեամբ, նոյն ահարկու հսկայական  
ժայռերը, նոյն լեռնային խոխաջուն վճիտ առուակներն ու աղբիւր-  
ները և դարձեալ նոյն վրդովուած, կատաղած, փրփրադէզ ալեոր  
Զարագեալ... Այստեղ «Փամբակայ ջուրն» ու «Ղարախաշի ջուրը»  
միանալով կաղմում են 2որագետի ջրերը: Փամբակայ ջրի ձախ  
ափին բարձրանում են լեռնանման բարձր պատուանդները, որոնք  
սարսափ են աղբուած մարդու վրայ:

Աղարակների մէջ փոռուած են բաւականին քանակութեամբ

լաշքաբեր, որոնցից մէկը հասարակ պարսպով շրջապատուած է,  
կոչում է սր. Կիրակի և ուխտատեղի է. քարը փաթաթուած էր  
թելերով, զգեստով կտորներավ և մօտը խունկ ու մօմ գրուած:  
Այդ խաչքարից ոչ հեռու, մի ժայռի տակից բղխում է մի սառնո-  
րակ վճիտ աղբիւր, որ նոյնպէս սր. Կիրակի է կոչում: Չորի մէջ,  
գետի ափին կային վարունգի «քօստաններ», որնց մօտ և «քօս-  
տանչու» խղճալի որջանման բնակարանը. մի քանիսս հանգստա-  
ցանք այգտեղ, մինչև որ «քօստանչին» մի քանի տասնեակ վա-  
րսնկ քաղեց ու ծախեց մեղ վրայ:

Կէսօրից մի փոքր անց էր, երբ հասանք Զորագետի ափը.  
արեգակն այրում էր, իսկ մենք անհամբեր ուզում էինք հասնել  
կտմբջին, որպիշեաւ նախինթաց օրը ոմանք խորհուրդ չէին տա-  
լիս մեզ՝ անցնել այդ ճանապարհով և կասկածելի էին հա-  
մարում այս վայտեայ կամուրջը. իսկ ոմանք էլ հակառակն էին  
պնդում և ի գուը չաշշարանք համարում ահագին տարածութեամբ  
ճանապարհն երկարացները: Տամնեցորս արշին երկարութիւնը  
ունեցող և կատաղի Զորագետի վրայ ձգուած երերուն կամուրջի բաղ-  
կացուցիչ մասերն են՝ երեք գերան միմեանց կողքի և երկարու-  
թեամբ դարձուած, իսկ զրանց վրայ հորիզոնական ձևով ձգուած  
են փոքր վայտեր, որոնք ամբացրած շննելով շարժուն դրութեան  
մէջ են և անզգոյ ու սիսալ քայլը կարող է այդ վայտերը տեղա-  
հան անել և վրան վրան երողի հետ ի միասին գետի կատաղի  
ալիքների մէջ ընկնել:

Բանջարանցուում աշխատող հայ գիւղացիներից մէկը շալա-  
կից մէր բեռն և անցնելու ժամանակ յանկարծ սիսալ քայլ անե-  
լով քիչ մնաց որ զիսի վայլ ցած ընկնէր, բայց կարողացաւ հա-  
ւասարակշութիւն պահպանել և անվտանգ անցաւ ու կրկին յետ  
եկաւ մեզ մօտ. մեղնից շատերը տեսնելով այդ արկածը, վախե-  
ցան և զողողալով ու զունատուելով անցան «մաղէ կամուրջ»-ից.  
ոմանց էլ ձեռքը բռնած անցկացրինք, որովհետեւ ահարկին գոռում  
գոչինով վազող գետը կամուրջի վրայից նայողին սարսափ էր աղ-  
դում, աշքելը «շաղուած» և հաւասարակշութիւնը կորցնել տալիս.  
այս հանգամանքն էր ահա երկիւրալին, եթէ ոչ կամուրջն ինքն  
ըստ ինքնեան այնքան էլ վասնգաւոր չէր: Երբ ամենքս անվտանգ  
անցանք, կարծես մի ժամն բեռ ընկաւ մեր ուսերից, ցայժմ մեր  
ճանապարհորդութեան ընթացքում այսպիսի երկիւրալի դրութեան  
մէջ չէինք եղել: Դաստիարակը թէն ամեն կերպ խրախուում և

քաշալերում էր մեզ, որ «ավտանելս պինդ պահնենք» և աներկիւզ անցնենք, սակայն պարզ երեռմ էր, դժգո՞ն էր այս ճանապարհով գնալը խորհուրդ տուողներից:

Կամուրջն անցնելով՝ սրտանց չնորհակարութիւն յայտնեցինք մեզ օգնող գիւղացուն և գիմեցինք նեղ ու գժուարանցանելի շափուներով գէպի Քոյբայր. բայց զեռ այդակը չհասած, Չորագետի ձախ ափին, ձորի գլխին, Այգեհատ գիւղից հարաւ՝ գիտեցինք մի փոքրիկ սագաշին եկեղեցի: Այս եկեղեցու տանիքն արդէն հեռուց երեսում էր անտառի միջից, թէ կմքեթ չունի, որմերն արտաքուստ և ներքուստ սրբատաշ քարից են շինուած, իսկ առաստաղը հասարակ քարից և գաճուկրով շինած: Տաճարն անսին ու կամարակապ է: Եկեղեցու տակը գանուում է նոյն մեծութեամբ ներքնայարկ. այսպիսի երկյարկ եկեղեցի ուրիշ ոչ մի տեղ չենք տեսել: Ստորին յարկի մուտքը արեկելեան կողմից է, իսկ վերին յարկինը արեմտեան կողմից. Ներքին յարկի առաստաղը բաւականին տեղ քանդուած է շրջանաձև բայտածքի ձևով. վերին յարկն ունի Յ լուսամուտ՝ արեկելեան, արեմտեան և հարաւային կողմերից, իսկ ներքինը ոչ մէկը չունի, որտինետե համարեան թէ գետնի տակն է շինուած:

Տաճարի վրայ թէ ներքուստ և թէ արտաքուստ թէ ոչ մի արձանագրաւթիւն չկայ և յայտնի չէ թէ ո՞վ և երբ է շինել եկեղեցին, սակայն տեղացիներն անուանում են «2իթախանց եկեղեցի»: Եկեղեցու երկարութիւնն է 8 արշին լայնութիւնը  $4\frac{1}{2}$  արշ., բարձրութիւնը 6 արշ. 10 վերշ.: Հուրցը կամ տապանագարեր վրացերէն «փուուցուի» կոչուած տառերով և ծածկագրերով: Եկեղեցու բեմն էլ յունականի նման է, ուստի կարելի է ենթագրել, որ սկզբումը հայոց եկեղեցի վնելով յետոյ վրաց աիրապետութեան ժամանակ, յունական է զարձել:

Դիտութիւնը վերջացրինք. յունել ենք, մի փոքր էլ քաղցել, բայց այսաւեզ ազբուր չկայ, որ ճաշենք. թէ արդէն ժամի 2-էր, արեկի կիզիչ ժամանակը, բայց խիտ անտառի մէջ լինելով՝ բալորովին ազատ ենք արեկի չերմութիւնից: Մի փոքր էլ գնալով հասանք մի յորդառատ աղբուրի, պարկներս ցած բերինք մեր ուսերի վրայից, հանեցինք մեր ճաշը, որ բաղկացած էր հաց ու պանիր և վարունիք և ազբուի ջրի հետ միասին մեծ ախտքաւկով ճաշակեցինք:

Հանգստանում ենք և հեռուց նայում վանքին, որ արծուի

ընի նման կառուցուած է ժայռերի զլիխն. ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէ լսում այնտեղից. տիրու տեսարան. մի ժամանակ չին, հարուստ, պայծառ և հարիւրաւոր ջերմուռանդ կրօնաւորների ու հաղարաւոր երկիւղած ուխտաւորների երկինք բարձրացող հնչիւնների աեղ այժմ՝ լսում է երբեմն երբեմն միայն շարագուշակ բուի սուր ձայնը....

Ճաշերուց և հանգստանալուց յետոյ զառիվայր ճանապարհով բարձրանում ենք գէպի Քոյբայր. ամբողջ զառիվայրը ծածկուած է վանքից ժափուած, ահազին մեծութիւն ունեցող սրբատաշ քարերով: Մարդ սարսափում է, երբ վերև նայելով տեսնում է արդ ուղղահայեաց ժայռերի վրայ կառուցուած Աստուծոյ տաճարը և մի փոքր էլ մօտենալով զարմանում ապշում է, թէ մեր նախնին ի՞նչափսի երկաթէ կամք և ջերմուռանդ հաւատք են ունեցել, որ այսպիսի ահեղ ժայռերի վրայ կառուցել են այսպիսի մի փառաւոր և հրաշակերտ վանք. Ի՞նչպէս են կարողացել այսպիսի ահանի տեղեր շինութեան նիւթեր վեր բարձրացնել—արդեօք նրանք են ամենակարող եղել, թէ բնութիւնն է փոխուել, ինչ որ այժմ տեսնում ենք այն ժամանակ ուրիշ տեսակ է եղել....

Ժայռի վրայից սիրուն տեսարանն է բացում մեր առաջը. խորը ձորի մէջ ֆշալով, ոլոր մոլոր անցնում է գետը, երեսում «Ճրեթունայ» ձորը՝ իր ծխախոտի ցանքսերով և «քօստաններով». միմեանց յետեկո ահազին շարքերով կանգնած են անտառապատ, կանաչագարդ բլուրները: Վանքի հարաւային կողմն երեսում է մի մեծ քարայր, իսկ զբա ձափ կողմը ահուելի անդունդի զլիխն ապաւածների մէջ երեսում է հասարակ քարից շինուած մուտքը, որի ներսը, ինչպէս ասում են մեծածաւալ այր է և ժամանակով մէջը ահազին բազութեամբ մարդիկ են պաշտպանուել վարենի թշնամիների յարձակումներից:

Այս ահուելի միայնութեան մէջ մէկ փոքրիկ ձայնն ահազին աղմուկ էր հանում, իսկ հրացան արձակելիք այսպիսի մի զլրպիխն էր լսում, որ կարծես թէ տասնեակ թնթանօթներ են արձակել և բոլոր ապաւածները ցած թափել զէպի ձորը . . .: Սակայն սկսենք մեր զիտողութիւնը:

Այգեհատ գիւղից ցած զէպի հարաւ Չորագետի ձախ ափին, բարձր քարաժայուերի զլիխն միայնակ լսու կանգնած է Քոյբայր կիսաւեր և հրաշակերտ վանքը: Եկեղեցին կառուցուած է սրբատաշ, բայց ոչ այնքան մաքուր և լսու քարից և ուղղակի անդուն-

դի թերանին լինելով՝ մի քայլ անելու անգամ տեղ չկայ՝ պատիու ձորի մէջ։ Այս անսին, կամարակապ գաճային առաստաղն այժմ բոլորավին աւերուած է, իսկ մնացածը կանգուն է։ Եկեղեցին կառւացել են Կուբիկէ արքայի դուսարները՝ Մարիամն ու Ռուսուզանը. թէ որքան աշխատանք պէտք է թափուէր այսպիսի մի ահռելի և դժուար մատշելի վայրում եկեղեցի կառուցանելու համար, ակնարկուած է առարի մուռքի վրայ եղող կամարաձև դրան ճակատին գրած հետեւեալ արձանագրութեանց մէջ։

«Քս. Սծ. յիշեա դՄարիամ և զմուսուզան ի գալստեան քում»:

«Ի թուին ՈՒ (620—1171) ես Մարիամ դուստր Կորիկէի թագաւորի յաղէ Բագրատունի շնեցի զուրք կաթողիկէս աւզնութեամբ քուել ինոյ Ռուսուզնայ յիշատակ. մեզ և ծնողաց մերոց և հաւրագուեր մերոյ Ռուսուզնայ և եղոր մերոյ Աբասայ, որք երկրպագէք Քրիստոսի ի սուրբ քաւարանիս յիշեսջիք, զի վասն նեղութեան տեղոյս շատ աշխատեցի»։

Եկեղեցու մուռքի աջ կոսմի որմի մէջ եղած քարի վրայ կայ հետեւեալ արձանագրութիմը։

«Թուին ՈԼԵ (635—1186) ես Խաչգունդս.....գնեցի զքրմիս այզին և ետու ի սուրբ կաթողիկէս վասն իմ հոգւոյս. առաջնորդով լինի սր. Եկեղեցոյս պարափի ինձ տարին թ. ժամ. որ խափանէ իմ մեղացո տէր է տուածի Աստուծոյ ամէն»։

Հիւսիսային պատի վերայ կայ նոյնակս մի արձանագրութիմն, բայց եղծուած լինելու պատճառով չէ կարգացւում։

Տաճարի երկարութիմը, արեւելից—արևմուտք 7 արշ. 2 վ., լայնութիմը 4 արշ. 11 վերշոկ։

Այս Եկեղեցու հարաւային որմին կից շնուած է մի կամարաձև փոքրիկ մատու, որի որմը նոյնակս ժայռի գլխին է հաստատուած. մատուափ արագին պատերն Եկեղեցու շնչից աւելի ուշ են կառուցւուած երեսում. քարն էլ ուրիշ է։ Մատուի առաստաղն ու պատերի մէծ մասն աւերուած են։

Արքայագուստարների կառւացած Եկեղեցուց շորս արշնուկէս հեռաւութեան վրայ, զէափի արևմուտք, կանգնած է մի վաստանեղ, սրբատաշ քարից շնուած քարձ, բնդարձակ և սիրուն քանդակներով զարդարուած հոյակապ տաճար. Եկեղեցու արեւելեան արտաքին որմի վրայ, որ ուղղակի վերայիշեալ Եկեղեցու զիմացն է, քարձը առաստաղից աւելի գեղեցիկ քանդակներով զարդարուած. այս մուռքը բացւում է մեծ Եկեղեցու հիւսիսային որմին կցուած Եկեղեցու մէջ, որ նոյնակս անսին է և կամարակապ շնչիք և առանց կաթողիկէի և սրբատաշ քարերից կառուցւուած։ Եկեղեցին ամբողջապէս մնացել է անվնաս. որմերը սուազած են և վրան երեսում են նկարների հետքեր. երկարութիմն է 8 արշ. 9 վ., լայնութիմն 5 արշ. 12 վ.։

Պարզաբուած մի մէծ խաչ՝ նման Սանահնի զանգակատան արևմտեան կողմն եղած խաչին. այդ պատի վրայ կան նաև 5 լրսամուտներ։ Այս հոյակապ Եկեղեցու հիւսիսային որմին կցուած է մի ուրիշ Եկեղեցին առաջնից կիսով չափ ցածր։ Մէծ Եկեղեցուց մնացել են միայն արևելեան, արևմտեան և հիւսիսային որմերը, իսկ կաթողիկէն և ամբողջ հարաւային որմը քանդուած են և ինչպէս աեղացիք պատմում էին, 12 տարի առաջ եղած երկրաշարժից է ամենամեծ աւերումն առաջացել։ Եկեղեցին շնուած է անսին, կամարակապ, ներսից սուազուած է եղել և պատկերներ նկարուած։ Նկարներից մնացել են բեմի և արևելեան որմի վրայ եղաղ և մասամբ անձրիկց փշացած առաքելոց պատկերները. պատկերների վրայ գրուած է վրացերէն խուցուրի կոչուած տառերով։ Եկեղեցու հիւսիսային որմի մէջ կայ մի խորան. իսկ հիւսիսային և արևմտեան պատերի մէջ կան մի մուաք։

Եկեղեցու երկարութիմնը 22 արշ. 13 վ. է, լայնութիմնը (արտաքին որմից սկսած) 15 արշ. 7 վերշոկ։

Մէծ Եկեղեցու հիւսիսային որմին կից կայ գարձեալ մի ուրիշ շնութիմն, որ ինչպէս երեսում է յետոյ և աւելացրած և կամարակապ անկիմնաւոր շնչնք է. կանգուն է մնացել միայն առաստաղի մի փոքր մասը, մնացածը բոլորն էլ տառերուած է. առաստաղն ինչպէս երեսում է, հաստատուած է եղել սիմերի վրայ, որոնք թափուած ածած են այժմ յատակի վրայ և վերնախարիսխների վրայ գեղեցիկ քանդակներ ունին։ Այս շնչիքը նմանուած է գալթի։

Գալթից գէպի մէծ Եկեղեցին է տանուած Եկեղեցու հիւսիսային որմի վրայ գտնուած մի ընդարձակ և հոյակապ քանդակներով գարդարուած. սիմենազարդ մուտք, որի բարձրութիմն է 3 արշ. 3 վ., լայնութիմն 2 արշն։ Մուտքի աջ և ձախ կողմերում կան 3 արձանագրութիմներ. երկուաը բաղկացած են հինգհինգ, իսկ երրորդը իննը տողից. բոլորն էլ գրուած են հին վրացերէն խուցուրի տառերով։ Գալթի արևելեան կողմից գտնուած է մի երկրորդ մուտք՝ առաջնից աւելի գեղեցիկ քանդակներով զարդարուած. այս մուռքը բացւում է մեծ Եկեղեցու հիւսիսային որմին կցուած Եկեղեցու մէջ, որ նոյնակս անսին է և կամարակապ շնչիք և առանց կաթողիկէի և սրբատաշ քարերից կառուցւուած։ Եկեղեցին ամբողջապէս մնացել է անվնաս. որմերը սուազած են և վրան երեսում են նկարների հետքեր. երկարութիմն է 8 արշ. 9 վ., լայնութիմն 5 արշ. 12 վ.։

Թէ մեծ և թէ նրան կից եկեղեցւ բեմի կազմուածքից (որ շատ ցածր է և սկիհը դնելու տեղ չունի) երեւմ է, որ այս եկեղեցիները հայկական չեն: Կարելի է ենթադրել, որ կամ սկզբումը հայոց լինելով՝ յետոյ վրացիք իրենց ձեռքն են ձգել, կամ թէ չէ հէնց սկզբից վրաց տաճար է եղել. իսկ հայոց Քորայր վանքը, որ յիշում է մեր եկեղեցական պատմութեան մէջ, գուցէ մեր նկարագրած և արքայադրսատրների շինել տուած եկեղեցին է, որ միաբանութիւն՝ ևս ունեցել է իր ժամանակին. եկեղեցական պատմութեան մէջ յայտնի է Քորայրեցին, որ մասնակցեց Լուսուայ եկեղեցական ժողովին՝ շարժական սեղան ունենալու առթիւ:

Այս փառաշխին եկեղեցիներից որ հետու, հիւսիս-արևմաեան կողմը կայ դարձեալ մի անսիւն, կամարակապ եկեղեցի, որի վրայ կառուցուած է կաթուլիկէանման զանգակատուն զմբէթլ՝ ութը սիւների վրայ հաստատուած կամարների վրայ: Մուտքը հարաւային կողմից է. նոյն կողմը կայ և մի լուսամուտ. մի ուրիշ լուսամուտ էլ կայ արևելեան պատի մէջ, բեմի կամարի տակը: Եկեղեցու բեմը ցածր է և յատակի վրայ եղող տապանաքարերի վրայ գրքուած է վրացերէն խուցուրի տառերով. կամարների վրայ երևում են նկարների հետքեր: Հարաւային որմի արտաքին կողմից, մուտքի մօտ կայ մի ընդարձակ արձանագրութիւն, նոյնպէս խուցուրի տառերով գրուած: Զանգակատան կաթուլիկէի խաչն ընկած է, չկայ:

Զագակատանից նայողի աշքին հիւսալի տեսարան է երեւու. արևելեան կողմի ձորի միջով հսուում է Զորագետը, հարաւային և արևմաեան կողմից կանգնած են սեպացած հոկայական ժայռերը, իսկ հիւսաւային կողմից անտառապատ լեռները. քարափների մէջ երեւում են մի քանի մեծ ու փաքք այրեք: Օքք երեկոյանում էր, երբ այս տեսարանով հըմաւելուց յետոյ՝ իջանք զանգակատանից՝ մեր գիտութիւնները շաբունակելու:

Զանգակատան մօտ գտնուում է մի ընդարձակ կամարակապ, դահլիճանման շինութիւն, որի արևելեան և արևմաեան որմերի մէջ գտնուում են երեք-երեք ընդարձակ կամարներ, որոնցից պահմտեան կամարներից մէկը բաւական խորն է և կամարակապ խորանի ձև ունի, մէջը կան մի քանի զարաններ: Ջմսութեան առաստաղը և բարոր կամարները, բացի մէկից, կամնուն են մնացել: Ջէնքի ձևից կարելի է ենթադրել, որ միաբանութեան բնտ-

կարան կամ սեղանատուն եղած լինի. շինուած է սրբատաշ քարից, երկարութիւնն է 17 արշ. 3 վ., լայնութիւնը՝ 9 արշ. 12 վ., մէջը բուսել են ահազին մեծութեամբ ծառեր:

Քորայրի վանքը ծովի մակերեւոյթից 900 մետր բարձրութեան վրայ է գտնուում:

Մի քանի խօսք էլ ասենք վանքի հարաւային կողմը, ժայռերի մէջ գտնուող այրերի մասին: Այրերից ամենանշանաւորն է «Սղնախ» կոչուածը, որ նշանակում է արփութիւն, պատսպարան. սա ուղղահայեաց ժայռի մէջն է և գժուար մատչելի. տեսնողներն ասում են՝ որ այդ ահազին այրի մէջ հազարաւոր մարդիկ կարող են տեղադրուել: Յայտնի է, որ քարայրները միակ թագատեան տեղն էին անպաշտապան մնացած և թշնամիների յարձակման ենթարկուած գիւղացիներից. Նրանք իրենց հետ բաւականին պաշար վերցնելով՝ մի քանի օր և շաբաթ կարողանում էին իրենց գլուխն ազատել ընդհանուր կրտսերածից: Ես «Սղնախ» կոչուած այրի մասին էլ աւանդաբար հետեւեան էին պատմում. լեզգիների արշաւանքներից մէկի ժամանակ մօտակայ ընակիչները գալիս և ապավինում են այդտեղ: Լեզգիներն իմանալով այդ ամեն կողմից յարձակման են ենթարկում նրանցը, բայց ոչինչ չեն կարողանում անել—բարձրանալն էլ անկարելի է, վերջը ձորումն եղած ջրաղացաններից մէկին բռնելով՝ ստիպում են յայտնել իրենց այրի գաղտնի ճանապարհը. Ջրաղացանն սկզբումն ընդդիմաղրում է, բայց վերջը տեսնելով որ իրեն մահ է սպանուում, կատարում է նրանց պահանջը և յայտնում՝ քարայրի ճանապարհը: Լեզգիները բարձրանալով այրում են բոլոր այնտեղ եղողներին: Մատնիշին էլ լեզգիները գիւղատում են...:

Քորայր վանքից զէափի հիւսիս, նոյն գծի վրայ, շինուած է մի կամարակապ անսիւն և սրբատաշ քարերից շինուած եկեղեցի. սա ոչ գմբէթ ունի և ոչ արձանագրութիւն: Բեմի աջ կողմը, արևելեան պատի մէջ կայ մի պատսպագամատառոյց խորան՝ փոքրիկ ու կամարակապ մուտքով. եկեղեցու արևելեան հիւսաւային և հարաւային պատերի վրայ կան մի լուսամուտներ. իսկ արևմտեան պատի մէջ եղած անցքը փակուած է: Մուտքը հարաւից է:

Այս եկեղեցու երկարութիւնն է 12 արշ. 4 վերշ., լայնութիւնը՝ 5 արշ. 13 վերշ. և շինութեան ձևից պարզ նկատում է, որ հայկական է: Եկեղեցու հարաւային որմին կցուած է մի կամարակապ շինութիւն, որ ինչպէս երեւում է, ծառայել է գտիթի

տեղ: Գաւթի արեկեան և հարաւային որմերը բաղկացած են երկերու սիւների վրայ հաստատուած կամարներից: Գաւթի երկարութիւնն է 8 արշ. 12 վ., լայնութիւնը 6 արշ.: Թէ եկեղեցին և թէ գաւթի ամբողջ են մնացել, սակայն անխնամ և ներսն արդով լի: Եկեղեցու և գաւթի թէ մէջն և թէ շուրջը կան տապանագարեր:

Այս եկեղեցուց էլ քիչ հետու, դէպի հիւսիս, ձորի վրայ բարձրանում է մի ամուր, բարձր և բուրգերով պարփակ, որի մուտքը կամարակապ է, շինուած է սրբասաշ քարից և 4 արշ. 10 վերշ. լայնութիւնն և 7 արշ. 3 վ. բարձրութիւն ունի. պարփակը ձգում է արեկեցից արևմուաք: Մոււքը պարսպի սպորին ժայրի մօտ է. մուտքի ճակատին, կամարի տակ դրուած է մի մեծ քար, որի երկարութիւնն է 3 արշ. 6 վերշ., լայնութիւնը 1 արշ. 6 վերշով:

Վանքերն ունենալով սեպհական կալուածքներ, վարելահողեր, ոչխարի հօտեր, ասաւար, միաբանութիւնը պէտք է հոգ տանէր այս բոլորի անվտանգ պահպանութեան համար. վանքերում էին ժողովրդի նուիրական սրբութիւնները, սուրբ մասունքները, որ պէտք է զգուշութեամբ պահուէին թշնամու ձեռքից ազատ մնալու համար: Այդ էր պատմառն ահա որ մեր վանքերը համարեա մեծ մասամբ, եթէ շասներ բոլորը, շինուած են անմատչելի տեղեր, կամ ապաւաժների ու ժայռերի գլխին, կամ անդնդախոր ձորերի մէջ. ներն ընկած ժամանակը՝ ժողովրդուն էլ այստեղ էր ապաստանարան գտնում: Քարայր վանքն էլ ամեն կողմից բնական ամբութիւններով սահմանագծած լինելով հիւսիսային կողմից միայն գաշտ և անպաշտապան է և ահա այդ կողմն էլ շրջապատել են ամուր պարփակներով ու բուրգերով՝ թշնամիների մուտքն արգելելու համար:

Ժամի  $4\frac{1}{2}$  վերջացնելով պարսպի դիաողութիւնը՝ ճանապարհ ընկանք դէպի Այգեհատ գիւղը: Ճանապարհը անտառի և ձորի միջով շարունակում է մինչև Այգեհատի մօտերքը. երեք քառսրդի շափ գնում էինք խիտ անտառի խորհրդաւոր լուսութեան մէջ. լուսութիւնն ընդհատում էին մեր քրգերն ու Քարայրից ցած իջնող առուակը, որ մերթ ժայռերին դիպշելով, մերթ կանաշ խոտերի մէջ կորչելով, ընկերակցում էր մեզ: Լեռան լանջի վրայով գնալով ուղիղ ձորին ենք նայում և անզգայ քայլը կարող է մէկին անդունդը գլորել. քարերն ու «մարդաշափ» խոտերը դժուա-

բացնում են արագ գնալը: Չորսումն եղող այգիները գիւղի մօտ վերջանում, հաանում են և իրեն թէ այդ պատճառով էլ գիւղը կոչւում է Այգեհատ կամ Իգահատ:

Ուղիղ Այգեհատի ժայռերի տակ, Չորագետից բաւականին բարձր, գտնում է մի քարաշին կամարակապ եկեղեցի, որ անխափս է մնացել: Առաջ պատարագ է եղել այգտեղ և ուխտաւորներ են զալիս եղել. այգտեղ պէտք է լինի իրեն թէ մի ճգնաւորի գերեզման: Եկեղեցու ներսը մութն է, որովհեան միայն երկու փոքրիկ լուսամուտներ ունի՝ արեկելեան ու արեմտեան որմերի մէջ: Հիւսիսային պատի մէջ գտնուող զրան ճակատին կայ հետեւալ արձանագրութիւններ:

«Յիշեն Քս. Ած. զՍամուէլ և գծնողս իմ ի գալստեան քում. ի թուին Հայոց Ոչբ»: (672—1223). Մուտքի ձախ կողմում արձանագրուած է.

«Ես Վաչէ իմ հոգուոյ պատրաստեցի եկեղեցիս և ետուն ինձ Ա. աւր ժամոց այտնութեան ով խափանէ իմ խղճս տէր է»:

Հարաւային պատի վրայ գտնում են նոյնպէս ուրիշ արձանագրութիւններ, որոնք համարեն եղծուած են ամբողջովին: Թէ եկեղեցու մօտ և թէ մի փոքր բարձր կան բազմաթիւ խաչքարեր և պատուանդամներ. գուցէ վերեգմանատուն եղած լինի այստեղ:

Եկեղեցու երկարութիւնն է 7 արշ. 3 վ., լայնութիւնը  $4\frac{1}{2}$  արշ. բեմը լայն է և բարձր, 3 ասահիճանով:

Դիսուլութիւնը վերջացնելով սկսեցինք բարձրանալ ձորի գլուխը և պատահեցներ մի սպիտակ խաչքարի: Այս խաչքարը պատկերաքանդակ է եղել, բայց այժմ մեծ մասամբ փշացած է. խաչքարի միայն վերին մասն է ամբողջ մնացել: Խաչքարի փշացած մասի վրայ գնդակների հետքեր են երեսում. այդ մասին տեղացիք պատմում էին, իրեն թէ 40—50 տարի առաջ գիւղում մնացող կօգակների մի գունդ ժայռի գլխից նշան են գնելիս եղել և իրենց հմտութիւնը այդ սիրուն խաչքարը ծակուելով ցոյց տուել:

Խաչքարի գլխին քանդակուած է Յս. Քս. բազմած թափթի վրայ, սաքերի տակ բարձր ունի գրած. Փրկչի աջ կողմը քանդակուած է սբ. Աստուածածինը, Գաբրիէլ հրեշտակապետը և Պետրոս առաքեալը. ձախ կողմից քանդակուած է Յովաէկիր, Միքայէլ հրեշտակապետը և Պողոս առաքեալը: Խաչքարի վերին ծայրերին գտնում են Մատթէոս և Յովհաննէս աւետարանիշների պատկեր-

Ները—երկի մնացած երկու աւետարանիշների պատկերներն էլ խաչքարի ստորին ծայրերին են եղել քանդակուած։ Վերոյիշեալ բոլոր նկարների վրայ գրուած է նրանց անունները։ Խաչքարի շուրջն ամբողջապէս արձանագրուած է եղել, այժմ՝ կարդացւում է միայն հետեւեալը։

«Ողորմութեամբ պարոն Գորգէի կամպնեցաք... բարեխաւս լեր Պուշին բախտաւ....»։

Խաչքարը գրուած է մի աւերուած մատուռի որմի մէջ և կանգնած է կարծես իրեւ լուռ յանդիմանութիւն մարդկանց անարդ գործողութիւնների...»

Այս խաչքարը սկզբում շատ փառահեղ ու հրաշալի պէտք է եղած լինի։

Բարձրանում ենք դէսի Այգեհատ, մինչև քարափի տակը, կէս ճանապարհին շարուած են երկար նստարանաձև տափակ քարեր, այս տեղը ժողովրդի բերանում կաշւում է «Թարեջանի Թորոն»։ իսկ վերևն ուղղակի քարափի տակն եղող նոյնպիսի մի վայրը կոչուում է «հանգիստ»։ Երկուսն էլ, ձորից բարձրանալիս, հանգստանալու տեղեր են։ Այգտեղից սկսած լեռ քարափի մէջ ոլոր մոլոր սանդղաձև փորուած շալիղներով բարձրացանք ձորի գլուխը և մի փոքր հանգստացանք։ Գիւղի կողմից վշող քամին առաստութեամբ կալերի գարման էր բերում։ Բացի մի քանի երկարկանի և աղնուականներին պատկանող սններից, գիւղն ունի մօտ 20 տուն բընկիչ, որոնք կօռում յայտնի են իրեւ «աղքատ—հպարտ այգեհատցիք»։ Հանգստանալու միջացին մեզ մօտեցաւ մի միջահասակ մարդ՝ հանցած եւրոպական հագուստով և սպիտակ ուստական զինարկով և սկսեց մեզ հետ խօսել մաքուր ուռուերէն լեզուով և իմանալով որ հայ ենք, յետոյ սկսեց հայերէն խօսել, բայց նրան տարօրինակ և ինքնուրայն շարժումներից երկում էր, որ առողջ դատողութեան տէր մարդ չէ։ մեզ պատմեցին յետոյ, որ նա թըշկապետ Քոչարեանի եղբայրն է և ուղեղի հիւանդութիւն ունի, որ իրեւ թէ առաջացել է նրա գլխին ծանր հարուած իջեցնելուց...»։

Հանգստանալուց յետոյ բոլոսս կարգի ընկանք և մեր սովորական քայլերգուած անցանք գիւղի մօտով և ուղերդուեցինք դէսի Արգուի, ուր պէտք է գիշերէնք։ Արևն արդէն մայր է տեղել, երեկոյեան զով քամին վշում է և ճանապարհներս էլ հարթ գաշտի միջով։ արամադրութիւններս լաւ է և շարունակ երգելով ենք

գնում մի ժամուայ շափ ճանապարհը։ Դաշտի մի կողմն արդէն հնձած է, միւս կողմն էլ գիւղացիներն «արիմ քրտինք» մտած աշխատում են և մեր երեալուն պէս՝ մի մի խորձ շալակած վագում, գնում են առաջներս «աղա ձեզ վէշքէշ» խոսքերով և մի քանի կոպէկ ստանալով գոհ վերադառնում և կրկին մանգաղող ձեռք առնում։

Մութն ընկել էր արդէն, երբ հասանք Արդուի, գինուորական կարգով անցանք գիւղի միջով և իջևանեցինք Տէր-Յովսէփ քահանայ չոփուեանցի տանը, որի մի քանի զստակներն արդէն աւարտել էին իրենց ուսումը և որդեգիր եղել մեր դպրոցում։ Սիրով ընդունուելով և իրիկունը ուրախ անցկացնելուց յետոյ ընթրեցինք և երկու մասի բաժանուելով հանգիստ քնեցինք՝ նախապէս մեր յիշատակարանների մէջ նշանակելով օրուայ դէպքերի մասին նկատողութիւններ։

Օձուն, Յ օգոստոսի, շարաթ։

Արևն արդէն բարձրացել էր և իր ախորժելի ջերմութիւնը առածել ամեն կողմը, երբ ամենքս վեցցնելով մեղ հետ միայն մեր վերարկուներն ու յիշատակարանները գտըս եկանք տանից— գիւղի շրջակաւքը գիտելու։ մեղ ընկերացում էին հիւրնկալ Տէր-Յովսէփը և իր որդիքը։

Գիւղը, որ ընկնում է Զորպիտաի ձախ կողմը, Այգեհատցի դէսի արևմուտք, սիրուն տեսք ունի. շրջապատուած է ծաղկաւէտ և ջրառատ լեռներով. օգը զով և մաքուր, կարկաշանոս և քաղցրանամ, աղբիւրներն առողջարար. մի խօսքով լաւ ամարանցի տեղ է։ Գիւղը պատկանում է Լոռու Մելիքեանների և Քալանթարեանների տոնմերին։ Լոռու-Մելիքեաններն այստեղ կոչւում են «Ճայինանք» և ծերերի ստեղով Յովհաննէս Օձնեցի հմաստասէր կաթողիկոսի սերնդից են։ Գիւղի հաստատման քնակինների թիւն ընդամենը իննը տան է. զրանք պարապում են երկրագործութեամբ և խաշնարածութեամբ։

Արգուին ծովի մակերեսոյթից 1020 մետր բարձր է գտնուում. երեք կողմից շրջապատուած է կանանչագեղ ու ծաղկաւէտ բլուրներով, իսկ առաջը տարածւում է ընդարձակ դաշտավայրը։ Գիւղի երկու կողմները կան երկու փոքրիկ ձորակներ, որոնցից մէկը կոչւում է «վիշապաձոր», միւսը «Ճայինանց ձոր». ունի Յ եկեղեցի, Յ եկեղեցի։ Այդ աւերակ եկեղեցիներից մէկը գտնուում է գիւղի

արեւեան կողմը. ամբողջ է մնացել միայն դրա բեմի կամարը. այս աւերակին գիւղացիներն անուանում են «Պուճով վանք». շինուած է եղել սրբատաշ քարից: Պուճով վանքի մօտ մի պատուանդանի վրայ կամունած է մի բարձր կոթող, որի 2 երեսի քանդակագործութիւնը նման է Դսեղ գիւղի գերեզմանասանը գտնուող կոթողին. բարձրութիւնն ու հաստութիւնն էլ համարեաթէ նոյնն է. միայն սրա վերին մասից մի փաք կուրուած է և աւելի փչացած, ոչ կոթողի և ոչ էլ պատուանդանի վրայ արձանագործութիւն չկայ:

Այդ կոթողից դէպի հարաւ-արեւելք գտնուում է մի ուրիշ աւերակ եկեղեցի, որին գիւղացիներն անուանում են «Կարմիր վանք» կամ «Քալանթարանց եկեղեցի»—երեխ այդ տոհմն է կառուցել: Եկեղեցին թէ տրտաքրուատ և թէ ներքուստ շինուած է կարմիրագոյն, գիւղուն և սրբատաշ քարից, կամարակապ է և անսիւն: Առաստաղն ու կամարները քանդուած են, մնացել է միայն միջին կամարը որ նայնից քանդուելու վրայ է. մուտքը հարաւային կողմից է, սրա մինն աւելի վիսրան քարից լինելով փչացել են: Եկեղեցու երկարութիւնը է 10 արշ. 6 վերշ., լայնութիւնը՝ 5 արշ., շուրջը կան բարձաթիւ գերեզմանաքարեր՝ անձաշակ և տղեղ նկարներով: Մէկի վրայ օրինակ քանդակուած է մի կոնչ պատկեր՝ կրծքին մի երեխայ կպած. գիւղին երկու կողմերը քանդակուած են կտափչ և բէջ (գորգ գործելու գործիքներ) մի ուրիշ տապանաքարի վրայ քանդակուած է մի այր մարդու պատկեր՝ կրծքին ոուր և սազ, իսկ գիւղի 2 կողմերը գաւ և «հազարիկեցայ» և այն: Թէև այս քանդակներն անպատճառ են, բայց որոշ գազափարներ են արտայայառմ և մի աեսակ պատկերագրեր են ներկայացնում. այդ քանդակներով իմանում ենք գերեզմանումն եղողի սեալ և մօտաւրապէս ինչ արհեստի կամ կոչման տէր լինելը—այդպիսի տապանաքարերի վրայ սովորաբար ոչինչ չէ գրուած լինում: Այդ սովորութիւնը մինչև այժմ էլ գործ է զրւում շատ դէպքերում, օրինակ եափոկուուների կամ քահանաների տապանաքարերի վրայ նկարում են խոյր, թափ, խաչ, աւետարան, և այն: Մեր դիտած վանքերից շատերում տեսել ենք տապանաքարեր առանց արձանագրութեան, բայց ի նկատի ունենալով վրան քանդակուած եափոկուական կամ քարդապետական գտագումնը՝ իմացել ենք համգուցեալի հոգեսոր աստիճանը:

Գիւղի հարաւային կողմը, վերոյիշեալ եկեղեցուց ոչ հեռու

քարուկրով շինուած է մի փոքրիկ եկեղեցի, որ կոչում է «Տայնանց» և բոլորովին անտէր մնալով կիսաւեր է և կինդանիների աղբով լի: Եթէ հոգեսոր փարչութեան գործակալներն այնքան տգէտ և անփոյթ են, որ թոյլ են տալի այդպիսի տղեղ երեսութների տուաջնալը, գոնէ այն իշխանութեան տոհմի անդամները, որի անունը կրում է եկեղեցին, այդ անպատաւթիւնից աղասելու համար արգելէին Աստուծոյ տաճարը... ամաշում եմ ասել «Փողանոց» դարձնելու....

Վերայիշեալ երեք աւերակ եկեղեցիները դիտելուց յետոյ ուղղուեցինք դէպի գիւղի հիւսիսային կողմը գտնուուղ «վիշապաձոր», որի միջով անցնում է մի առուակ: Զորակի բրի տակ քարափի մէջ ձգում են օձապասոյտ կերպով երկու սկ չերտեր, որմք իրենց օձանեւութեան պատճառով աւիթ են եղել մի աւանդական առասպելի ծագման. առասպելի մէջ, այդ շերտերը դառնում են երկու վիշապներ, որոնք «քարացեր» են Յովհան Օձնեցի և Խմաստակը կոչուած կաթողիկոսի աղօթքով. այդ պատճառով էլ ձորն անուանում է «վիշապաձոր»: Ահա այդ աւանդական առասպելի բովանդակութիւնը. «Մի օր այդ երկու վիշապները գալիս են ջուր խմելու ձորի միջովը հոսող առուցից, այդ միջոցին բլրի գլխից անցնելիս է լինում մի կին կովկիթը գլխին. սա տեսնելով վիշապները, մկում է իւր բլրոր ուժովը ծուալ ու աղազակել: Այդ միջոցին Յովհան Խմաստակը կաթողիկոսն աղօթքում էր եկեղեցում և լսելով կոնչ աղազակները, իր աշակերտներից մէկին ուզարկում է տեղեկանալու թէ ինչ է պատահել. աշակերտը զնում է ձորը և վիշապների կեր գառնուում: Կաթողիկոսը միմեանց յետելից ուղարկում է իր հօթն աշակերտներին և ամենքն էլ նոյն վիճակին են ենթարկուում. կաթողիկոսը զարմացած գուլս է գալիս, տեսնում է վիշապներին և գործի էութիւնն ըմբռնելով՝ անիծում է վիշապներին որ քար կարուին՝ նախալէս հրամայելով յետ տալ իր աշակերտներին. վիշապների գորերից գուլս են գալիս աշակերտները՝ սակայն մեռած: Ապա կաթողիկոսը գաւազմուով խփում է վիշապներից մէկի պորտին և այնաեղից մի առողջարար աղքիւ է բլիեցնում, որի ջուրը բժշկում է օձանաբներին: Կաթողիկոսը անիծում է նոյնպէս իր աշակերտների գժբաղդութեան պատճառ եղող կոնչը և նա էլ կովկիթը գլխին քար է կարուում. այդ քարը ցոյց են տալիս ձորի գլխին: Զորակի գլխին եղած քարերից մէկն էլ աւանդաբար համարում է հօթն աշակերտների զամբարանը և

կոչում «եօթը մօնթերի գերեզման»։ Գիւղացիք այստեղ ուխտ են գալիս և ամեն տեսակ հիւանդներ հետները բերելով խսնդում են վիշապի պորտից հոսող ջրից կամ լուսնում են նրանց վէրքերը։

Երեի, բացի այդ քարեայ օձապտոյտ շերտերից, աղբիւրի ջրի երեմն ունեցած բուժիչ յատկութիւնն էլ նորա օգնել է այդ առասպելի բերնէ բերան անցնելուն. առասպելը շատ հին է երեւում, որովհետեւ տասնեւերեքերուսդ գարում արդէն յայտնի է եղել — Կիրակոս պատմագիրը խօսելով Յովհան Օձնեցու մասին, յիշում է այդ առասպելը։

Առասպելական «վիշապի պորտից» մենք էլ ջուր խմելով ճանապարհ ընկանք դէպի Յովհան Օձնեցի կաթողիկոսի դամբարանը, որ գտնւում է գիւղի հիւսիս-արևմտեան կողմը։

Անցնելով պարսպի միջից և մտնելով եկեղեցու բակը մեղ դիմաւորեց մօտ 40 տարեկան մի մարդ, հեզ և համալրելի դէմքով, ուսերի վրայ առատութեամբ թափուած երկար մազերով. մորթէ գիւտարկը զիմին, քոչերը ոտքերին, հասարակ լաստիկեայ արխալով հագին և վրան կապած հասարակ կարդից գօտի։ Այդպէս ներկայացաւ մեղ մեր ժամանակակից «ճղնաւորից», որ գիշեր ցերեկ մնում է վանքում և արթուն պահապան է։ Թէև առաջ վարդապետ միաբան է եղել միշտ այդ սր. նշանակութիւնը, բայց այժմ բացի այդ «ճղնաւորից» ոչ որ շկայ։

Վանքը բաղկացած է մի անսին, կամարակապ, հասարակ քարուկրով շինուած եկեղեցուց, որ այժմ ծառայում է գիւղական եկեղեցու տեղ, և նրան կից մի նոյնպիսի խորանից, որի մէջ ամփոփուած են Յովհան Օձնեցի կաթողիկոսի ամիւնը։

Յովհան Խմաստասէր Օձնեցի կաթողիկոսը մեր եկեղեցական փայլուն աստղերից մէկն էր. նա, ինչպէս ցոյց է տալիս նաև Օձնեցի անունը, Տաշիրը կամ Լուի գաւասի Օձուն գիւղիցն էր. մանկութեան հասակից նա աշակերտեց այն ժամանակի նշանաւոր և գիտնական վարդապետ Թէոդորոս Քոթենաւորին։ Օձնեցին օժտուած լինելով թէ ներքին և թէ արտաքին բարեմանութիւններով շուտով հոչակ է ստանում ամբողջ ազգի մէջ իրեւ հանճարեղ, իմաստուն, ճղնազգեաց և առաքինի մարդ և ժառանգում է «իմաստասէր» նշանաւոր տիտղոսը։ Ազգը զնահատելով Խմաստասէրի արժանաւորութիւնները՝ սր. Գրիգորի յաջորդների շարքն է դասում նրան կաթողիկոս ընտրելով։ Խմաստասէրը ստանձնելով այդ նուիրական պաշտօնը ամեն ջանք գործ է զնում եկեղեցին։

Հայաստանեայց պաշտպանել օտար գայլերի դէմ և դարման տանել իր հօտի ցաւերին։ Նա եկեղեցական ժողով է գումարում Դովին քաղաքում զանազան եկեղեցական կանոններ է հաստատում և իր ճարտար լեզուով, իմաստուն հանճարով և սրբատառ գրուածքներով կարողանում է մեր եկեղեցին աղանդաւորների որոզայթներից ազատ կացուցանել։ Խմաստասէրն իր հայրենի գիւղում մի փառաւոր եկեղեցի կառուցանելուց յետոյ քաշում է Արդուի և այժմուն մեր դիտած վանքում առանձնանալով ճգնութեամբ է անցկացնում իր կեանքի վերջին օրերը։

Ներս մտնենք և զգացուած ու պատկառանդով խոնարհելով այդ սուրբ մարդու զամբարանի առաջը, համբուրեցինք սր. խաչը, հոգեոր համեստութեան և քրիստոնէական հեղութեան այդ յափատեական արձանը։ Եյն, մեծափառ և հրաշափերու արձան չէ զրուած ամբողջ ազգի սիրելի և հանճարեղ հոգեոր պետի զամբարանի վրայ, սակայն մենք պատմութիւնից ծանօթ լինելով սր. մարդու գործերի հետ, համեստ խաչն այդ բոպէին ամենաշքեղ արձանից ու կոթողից աւելի մեծ ներգործութիւնն ունեցաւ մեր մատաղ սրտերի վրայ…

Սրբի ամիւնն ամփոփուած է քարեայ գագաղի մէջ, որի կափարիչը անտաշ և կարմիր գրանիտեայ քարից է, իսկ զագաղը շինուած է սպիտակ քարից։ Դագաղի և կափարիչի մի մասը գրանում է սր. սեղանի տակ, որպէսզի անկարելի լինի տեղից շարժել. զագաղի ոտքերի կողմը դրուած է մի սկ քարից շինուած խաչքար։ Դագաղի երկարութիւնն է 2 արշ. 7 վ., լայնութիւնը 13 վ. իսկ զագաղը պարփակող խորանի երկարութիւնն է 6 արշ. 15 վերշ., լայնութիւնը 4 արշ. 10 վ.։

Եկեղեցու բեմի վրայ դրուած էր մի հին, ժամկոտած ու ծակ զանգակ և Յովհան Օձնեցու, միջակ մեծութեամբ, ձիթանկար պատկերը. զանգը գտնուել է վանքի պարտիզում, իսկ պատկերը մօտ 40 տարի առաջ նուիրել են Լուսու-Մելիքեանները։

Դամբարանը պարունակող խորանի արևմտեան որմին կից գտնում է մի կամարաձև շինութիւն կարմիր, սրբատաշ քարից կառուցուած, որ եղել է խորանի առաջը կառուցուած և այժմ բոլորին աւերտած նախկին եկեղեցու բեմը. այս բեմի միջին է եղել սրբի ամիւնն ամփոփող խորանը մանելու անցքը, որ այժմ էլ կայ. բեմի վրայ մնացել են վէմ քարը և սկիճի տեղը։ Այս եկեղեցին բոլորովին աւերտած յետոյ է կառուցուել այժմեան եկեղեցին։

Եկեղեցուց ոչ հեռու, գէպի հարաւ, գտնուում է զանգակատունը, որի փոքրիկ կաթողիկէն կանգնած է վեց քարեայ սիմերի վրայ. զանգակատան տակը կայ մի փոքրիկ սրահ, իսկ որմերի մէջ կան մի քանի խաչքարեր. շինուած է անտաշ քարից:

Եկեղեցու շուրջը կան բազմաթիւ գերեզմանաքարեր և մի կոթող՝ նման մեր տեսածներին, միայն աւելի աւերռած. կոթողի մի երեսի վրայ արձանագրութիւն է եղել, որ այժմ եղծուած վենելու պատճառով չէ կարդացուում: Զանգակատան տակը կայ մի գերեզմանաքար՝ սև քարից շինած մի խաչարձանով, որի վրայ գրուած է. «Քս. բարեխաւ եղիսկոպոսին ի թվին ՈւձՂԴ» (1134—1685), իսկ գերեզմանաքարի վրայ գրուած է. «Այս է տապան Մելիքայ Ամիրջանայ որդի Պաւոս պարոն Տէր սր. Յովհաննու ծառայ»:

Զանգակատան արևմտահարաւային կողմը կառուցուած է մի քարեայ ամբար. ամբարի կողքին երևում են բնակարանի հետքեր. ամբարն այժմ գործածական չէ: Վանքը պատած է ցածր պարբռպով, որ շինել են տուել Լոռու-Մելիքեանները:

Վանքի գիտողութիւնը վերջացնելուց յետոյ, պարսպից գուրս եկանք և գնացինք արևմտան կողմը գտնուող գերեզմանատունը տեսնելու: Այս ընդարձակ գերեզմանատան մէջ կան բազմաթիւ կանգուն խաչքարեր, որոնց վրայի արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ մեծ մասսամբ տամնենինք ու տամնենոթերորդ գարուցն են: Խաչքարերից մէկի գլխին քանդակուած է մի բազմազլիւան վիշապ, երկու կողքերին մի մի նիզակաւոր մարդիկ. խաչքարի վրայ գրուած է. «Թուին ՈՒԾ (1031—1582) սր. բարեխաւ է պարոն Մելիք որ ի Կեսարիա նահատակեցաւ ի Քս.»:

Վերջին անգամ մեր հայեացքն ուղղելով իմաստասիրի նշխարները պարունակող վանքի վրայ և յիշելով անցեալ գալերում մեր նախնեաց կրած հալածանքն ու տանջանքները, աւելի ևս փայլուն կերպով ներկայացաւ մեր երեւակայութեան մէջ այդ հանճարեղ մարդու պատկերը և տապաւորուեց մեր սրտի խորքերում...

Վերապարհանք գիտ, չնորհակալութիւն յայտնեցինք մեղ հիւսափող տէր հօրը և սովորական կարգով ճանապարհ ընկանք դէպի Օձուն, որպէսպի գիտենք ճանապարհի վրայ գտնուող և «Հոռոմայր» կոչուած վանքը:

Արդուիից ժամի 12-ին ճանապարհ ընկնելով, կէս ժամից յետոյ հասանք ձորի գլուխը, ուր գտնուում է վանքը. վանքից Օձուն

էլ կայ դարձեալ մի կէս ժամուայ ճանապարհ:

Օձուն գիւղից դէպի հարաւ, շորագետի ձախ ափին, ձորի գլխին է կառուցուած չոռամայր վանքը, որ երեք բաժանմունքից է բաղկացած: Միջին բաժանմոնքը և խաչաձև կամարների վրայ շինուած մի անսին գակիթ է, որի արևելեան որմի մէջ կան 3 սիրուն խաչքարեր: Դաւթի հարաւային և հիւսիսային որմերին կից գտնուում են երկու կամարակապ, անսին պատարգագատուց խորաններ: Հարաւային որմին կից գտնուող խորանը շինուած է ամուր և սև սրբատաշ քարից և անխախտ է մնացել, իսկ հիւսիսային որմին կից խորանը կառուցուած է կարմրագոյն քարից. առաստաղը քանդուած է և ոնի մի կամարակապ ու սիւնաղարդ գեղեցիկ գտուը:

Գաւթի երկարութիւնն է 6½ արշ., լայնութիւնը 5 արշ.

14 վ., կամարի բարձրութիւնը 3 արշ. 14 վ.: Հիւսիսային խորանի երկարութիւնն է 6 արշ. 6 վ., լայնութիւնը 3 արշ.: Հարաւային խորանի երկարութիւնն է 6 արշ 7 վ., լայնութիւնը 3 արշ. 8 վերջով:

Հարաւային խորանի մուտքի վրայ կամարաձև գրուած է հետեւալ արձանագրութիւննը:

«Ի Թուին ՈՒԾ (655—1206) ի թագաւորութեան Լաշային յամիր սպասալարութեան Զաքարէի և որդուոց իւրոց ձահնշահի և եղբաւը իւրոյ հւանէի, ես հայր Սամուէլ և այլ միաբանքս շինեցաք զեկիւթեցիս վասն յերկար կենդանութեան պատրոնաց մերոց յիշատակ հոգւոց մերոց և ծնողաց մերոց, որք երկրպագէք մեղ յաղալիթս յիշեցէք»:

Հարաւային որմին կից գրուած է հետեւալը.

«Ես Դաւթիթ զիմ հոգոց պաշար ի սուրբ նշան ետու և Սամուէլ և այլ միաբանքս ետուն ինձ Ա. աւր ժամ ի Դաւթիթ մարզարէի տամնին ովլ խափանէ իմ մեղացս պարտական է առաջի Այ.»: Հարաւային խորանի հարաւային որմի վրայ կայ դարձեալ մի արձանագրութիւն թէ՝ խաչքունդ անունով մէկը միաբանէլ է սր. նշանին և տուել բ. օրավար հոդ, ծ. զահեկան և իր հոգւոց պաշարը:

Այդ վանքից ներքե, ուղղակի քարափի տակն է սր. նշանը, որ մեծ ուստանեղի է և ամեն տարի մեծ բազմութիւն է գալիս այստեղ. արդինքը սկզբում ներսիսեան դպրոցին է եղել, իսկ յետոյ յատկացուել է Օձուն գիւղի երկրասեան ծխական ուսումնարանին:

Զորի գլխից իջնելով ժայռի մէջ փորուած օձապտոյտ սահնդուխտներով՝ տեսանք երկու սիրուն, չես քարից՝ շինուած և պատուանդամների վրայ կանգնած խաչքարեր. մի փոքր էլ առաջ գնալով՝ կանգ առանք մի մեծ, ընդարձակ, կամարակապ, անսիւն և սըրատաշ քարից շինուած եկեղեցու առաջ, որի պատաստաղը քանդուած է և միայն պատերն են մնացել ամբողջ: Բեմը սուաղած է և վրան երեսում են նկարների հետքեր. բեմի կամարի վրայ կարգինք հետևեալ արձանագրութիւնը.

«Կաման Այ. ես եկնասիոս շինեցի զեկեղեցին վասն երկար կենդանութեան պատրինաց... թուին 2» (700—1251): Եկեղեցու հարաւային արտաքին որմի երկու քարի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «Ես Զուղէ գուստը Սարգսի Քարնչեցւոյ յաղդէն Մամիկոնեան միաբանեցայ սր. Նշանին և ետու զիմ հոգւոյ պաշարն հայր Սարգս և միաբանքս եղալն ի թուին 2ՀԵ». (775—1326): Եկեղեցին երկու մուտք ունի՝ մէկը հիւսիսից, միւսը հարաւից. բեմի տակն էլ կայ մի գաղտնի անցը գէպի ցած: Եկեղեցու երկարութիւնն է 15 արշ., լայնութիւնը 13 արշ. 4 վ.:

Հարաւային մուտքից գուրս գալում տեմեռում ենք մի կանոնաւոր, սրբատաշ քարից շինուած աշտաբակի վրայ մի զմբէթաւոր զանգակատուն. աշտաբակի ներմն եկեղեցի՝ է՝ պատարագամատոյց սեղանով: Հիւսիսային մուտքի առաջը կան մեծ մեծ տապանագրեր: Արևմտեան կողմն ուղղակի բնական ժայռն է՝ ծածկուած ամբողջապէս հայերէն արձանագրութիւններով, որմիք կտոր կտոր են և տասնեւշորսերորդ դարուց: Ամբողջապէս արձանագրութիւններով ծածկուած ժայռի երկարութիւնն է 8 արշ. 7 վերշով. արձանագրած մասի լայնութիւնն է՝ 2 արշ. 13 վ.՝ Աղտակ կայ նոյնպէս մի խաչքար, որ կանգնած է մի մեծ ու միապաղ քարից շինուած պատուանդանի վրայ. պատուանդանի երեք կողմերն էլ լի են արձանագրութիւններով: Այս արձանագրութիւնների տեղն այժմ ծածկուած է՝ վայսեայ ծածկով և մի սրահանման չէնք է ներկայացնում: Այս սրահի հարաւային կողմն է գրանուում զանգակատան տակն եղող եկեղեցու մուտքը, որ շինուած է քանգակագործ, սիւնագարդ կամարած սրբատաշ քարից. մուտքի գլխին քանգակուած է Փրկչի պատկերը, որ աջ ձեռքավ խաչակիրում է, իսկ ձախ ձեռին աւետարան ունի բռնած: Մուտքի աջ և ձախ կողմը կան քանդակուած հրեշտակներ՝ ձեռքերին խաչքուած: Ներսը կան երկու խորաններ՝ պատարագամատոյց սեղանաւում:

Ներով. խորանների ներսը մուլթն է՝ միմիայն արևելեան պատի մէջ մի հատ լուսամուտ ունենալու պատճառով: Առաջին խորանն արևմտեան կողմից ունի մի փոքրիկ խորան՝ ժայռի մէջ. այս խորանի երկարութիւնն է 5 արշ., 11 վերշ., լայն. 4 արշ. 13 վ.: Երկրորդ խորանի երկարութիւնն է 7 արշ. 4վ., լայն. 4 արշ. 2 վ.:

Զանգակատան երկրորդ խորանին կցուած է հակ մի երրորդ պատարագամատոյց խորան, որ սրբատաշ քարից է և ամբողջ է մնացել. խորանի արևմտեան որմի մէջ է մուտքը, որի զլսին կամարածեալ արձանագրուած է հետեւեալը.

«Թուին ՈԾ (650—1201) ես Սարգիս և Զաքարէ որդիք Յակոբայ Խալինայ մայր մեր շինեցաք զեկեղեցիս լիշտատկ հոգւոց ի հալութեան Սամուելի և ետուն մնզ աղ ու հացից կիրակին զմեր եկեղեցւուս ժամն մեր տանին, որ խափանէ դատի յԱյ. և մեր խորձիս աէք է. ամէն»:

Խորանի մուտքի մօտ կայ մի քարաշէն ամբար և ժայռի տակ փոքրիկ այրեր: Խորանի արևելեան և հարաւային որմերը լի են արձանագրութիւններով: Եկեղեցուն կից, գէպի հարաւ, ուղղակի ժայռի մէջ կան մի քանի այրեր, որոնցից մի քանիսը պարիսաներով պատած են եղել: Դրանց մէջ աչքի է ընկնում մի այր, որ ժայռի վրայ գտնուն էլ ունի, բայց անյայտ է թէ ի՞նչ աչքէն և որ կողմից է եղել մուտքը. այդ այրն է համարուում յունաց Վասիլ կայսեր ճգնարանը. բայց պատմական աւանդութեան՝ յունաց Վասիլ կայսրն իր զօրքով գալիս է հայերից վրէժինդիլ լինելու, բայց սաստիկ հիւսնազնուում է և դիմելով Յովհան Օձնեցու օգնութեանը՝ նրա աղօթքով աւողջանում է: Այդպէս հրաշքով մահից պատտուելով՝ կայսրը կրօնաւորի զգեստ է հագնուում ու ճգնուում է այստեղ մի այրի մէջ, մինչև իր մահը. այդ պատճառով ահա իրքն թէ այս վանքը կոշտում է չուռմ-այր, այսինքն հոսումի, յոյնի այր. վանքը այս անունը յայտնի է այստեղ միայն Օձունցիներին—ամբողջ Լոռին այս վանքն անուանում է սր. Նշան:

Ութերորդ (տասնեւշորսերորդ) զարում այս վանքը յիշուում է իրքն մեր նշանաւոր ուստմնավայրերից մէկը:

Վանքը շինուած է ապառած ժայռերի մէջ, ձորի մէջտեղից մի փոքր վերի և ծովի մակերեսոյթից 1100 մետք բարձրութիւն ունի:

Վանքից ներքե, ձորի մէջն է «Թնդոց» կոչուած աղբւրը. աղբւրի ջուրը կաթկաթում է ժայռից և երկի այդ հանգամանքի

Հնորհիւն է իր անունը ստացել: Զորի մէջ կայ սրբատաշ քարից շինուած մի փոքրիկ մատուռ, որ մասսամբ աւերուած է: Նոյնպիսի մի փոքր մատուռ էլ կայ զանգակատան առաջը, անտաշ, մանր քարերից շինուած. մէջը դրուած է մի խաչքար. քարերը ծածկուած են ջերմեռանդ ովատաւորների բերած թելերով, փալամներով և փառած մոմերի հետքերով: Լուռ ամեն կողմերից շարունակ ովատաւորներ են զալիս և օձապտոյտ շաւզով, ժայռերի միջով բոկոտի գնալով և իրենց ցաւերը յայտներով սր. Նշանին՝ նրա զօրութեամբ բժշկութիւն են հայցում և խոստումներ անում...: Մեր իջնելու միջոցին բարձրանում էին մի քանի բոկոտն կանայք. մէկը նրանցից գրկած ունէր մի հիւանդ երեխայ. կանանցից մէկը հարցրեց մեղ. «Ուր էք գնում» և երբ մեր պատասխանը լսեց, հառաչանքով աւելացրեց. «Ձեր մայրերի ջանը դուրս գայ, որ ձեզ թողել են ըտէնց պատիկ սալդաթ տանին թագաւորին»:

Մեր գիտազութիւնները վերջացնելուց յետոյ, ճաշեցինք, «Թնդոցի» սառնորակ ջուրը վայելեցինք, մի փոքր հանգստացանք և նոյն օձապտոյտ սանդուխտներով կրկին բարձրացանք վերև, ձորի գլուխը:

Կէս օրից անցել էր 3 ժամ. թէս արեւը գեռ փայում էր, բայց կամաց կամաց երեկոյեան հովը տիրապետող հանգիսացաւ. ներքեր, անդնդախոր ձորի մէջ, ուրո մոլոր սահում է Զորագետը, վերևը մէկ կողմից անտառապատ, կանաչագեղ բլուրներն են չքնաղ տեսարան ներկայացնում, միւս կողմը ոսկեղօծ արտերն են մեղմ քամուց ալիքանման ծածանսւմ: Բոլորն ուրախ տրամադրութեամբ և շնորհակալութիւն յայտնելով հրաժեշտ տուինք մինչև այստեղ մեղ ընկերակցող պ. Սիմ. Հովուեանին և նուազելով ու երգելով, շուտաքայլ ընթացքով դիմեցինք դէպի Օձուն կամ Ռւզունլար գիւղը: Ժարաթ երեկոյ լինելով գիւղացինները սովորականից շուտ էին վերջացրել իրենց աշխատանքը. Նրանք լսելով մեր թմբուիների ձայնը՝ խմբերով հաւաքսուեցան մեր շուրջը և հետեւում էին մեղ. մի տան առաջով անցնելիս՝ պարզ լսեցինք մի պառաւ կնոջ հետեւալ խօսքերը. «Ճեր թուրը կտրուկ լինի, բայէք»: Այս խօսքերը թէս մեր ծիծաղը շաբթեցին, բայց և այնպէս հաճելի թուացին մեղ...: Երգելով հասանք մինչև «Կընդանարար» (կինդանարար) աղբիւը, սաւանորակ ջրից կուշա խմեցինք և դիմեցինք դէպի եկեղեցին ու սկսեցինք մեր դիմողութիւնները:

«Օձունի «Խաշգունա» կոշուած եկեղեցին ամենից հինն է մեր

տեսածներից. շիմել է Յովհանն Խմաստասէր կաթողիկոսը հայոց ձ2Դ (184—735. Փրկ.) և նրա անունով էլ կոչւում է նոյնպէս Յովհանն Օձնեցու եկեղեցի: Եկեղեցին թէ դրսից և թէ ներսից լաւ տպաւորութիւնն է թողնում, միայն թէ շինութեան ձեւը յունականի նմանութիւն ունի. կառուցուած է մանր և ոչ այնքան սրբատաշ դեղնագոյն քարից, միայն քառանկիւնու ձև ունեցող սիմերն և կամարներն աւելի խոշոր և սրբատաշ քարերից են: Եկեղեցին հաստատուած է 4 արա սիմերի և 2 կիսասիմերի վրայ, որոնք գտնուում են արեւմտեան և արեւելեան որմերում. ունի չորս կամարներ, որոնցից 2 լայն են, (արեւելեան և արեւմտեան) և երկուսը նեղ (հարաւային և հիւսիսային): Երեք մուաք ունի, հարաւային, հիւսիսային և արեւմտեան կողմերից. լուսաւորուում է կամարների տակ գտնուած չորս լուսամուտներով. կաթողիկէն ունի նոյնպէս 4 լուսամուտ: Բեմի աջ և ձախ կողմը կան երկարկանի խօրաններ. երկրորդ յարկի խորանները մուաք չունին, բացի մի լուսամտից, որով պէտք է մուաք գործել խորանը շարժական սանդիխտի օվնութեամբ: Արեւմտեան մուաքի աջ և ձախ կողմը ընդարձակ կիսասիմերի մէջ կան մի մի մեծ անցքեր, որոնց գլխին դարձեալ ուրիշ փոքրիկ անցքեր. երեկի այդտեղ եղել են փոքրիկ խորաններ, որ վերանորոգութեան ժամանակ բացուել են, իսկ խորանների վրայ եղել են գաղտնաբաններ, որոնց մէջ և բացուելիս են եղել յիշեալ փոքրիկ անցքերը:

Այս եկեղեցին Լուռուայ ամենալուսարձակ տաճարներից մէկն է. երկարութիւնն է 36 արշ., լայնութիւնը 15 արշ. 13 վ., մեծ կամարների միջի տարածութիւնը 6 և կէս արշ. սիմերի և սրմերի միջի տարածութիւնը 2 արշ. 4 վ., կամարների բարձրութիւնն է 17 արշ. 1 վ. կաթողիկէի բարձրութիւնը չկարողացանք շափել՝ յարմարութիւններ չունենալու պատճառով:

Սիմերից մէկն կսած մարմարիների քարի վրայ ոսկեղօծ տառերով գրուած է հետեւեալը.

«Յամի Տեառն 1888 յամեանն հոկտեմբերի մէք Զաքարիա և Բաղդապար եղբարբս Արովեանց վերանորոգեցաք սոյն շնազաշէն Խաչգունտ կոչեցեալ եկեղեցիս գեղջս Օձնոյ հայրենեաց մերոց արդեամբ մերով, ըստ Աստուածահանոյ փափականաց և պատուիրանի բարեխնամ և գթառաւ մօրն մերոյ Եղիսարէթի ի յիշատակ նորա, հօրն մերոյ Կարապետի, և եղբօրն Գէորգայ՝ հանգուցելոյ ի Տէր»: Այս արձանագրութիւնից քիչ ցած դրուած է.

«Եկեղեցիս այս կառուցեալ է յամի Տեառն 735 ի հայրապետէն Տեառն Օհաննու Օծնեցոյ Խմաստափրէ»:

Այժմ գիտեցինք արտաքուստ:

Տաճարի արևմտեան գուռն ամենից գեղեցիխ է, շուրջը զարդարուած է նուրբ և գեղեցիկ քանդակներով, իսկ մուտքի ճակատին կան նուրբ քանդակուած պատկերներ և արձանապլութին: Նոյնալիսի քանդակուած պատկերների հետքեր երեսում են հիւսիսային և հարաւային որմերում գտնուած լուսամուանների վրայ: Որմերի վրայ եղած արձանապրութիւնները մեծ մասամբ եղծուած են: Եկեղեցին հիւսիսային, հարաւային և արևմտեան կողմերից շրջապատուած է կամարակապ պարիսպներով, որոնք ինչպէս երեսում է հետքերից, սկզբում պէտք է գաւիթներ եղած լինին. այժմ՝ առաստաղները բոլորպին քանդուած են. ահա այդ հանդամանքով էլ այս եկեղեցին տարիբերում է Լոռուայ միւս բոլոր տաճարներից, որոնք մի կողմից միայն գաւիթ ունին, բացի Յնէվանք կոչուածից, որ երկու կողմից գաւիթ ունի:

Եկեղեցու արևելեան կողմից կցուած է փոքրիկ զանդակատունը երկու կաթողիկէներով: Եկեղեցու շուրջը գերեզմանատուն է. այդանու եղած խաչքարերից մէկի վրայ կարդացում է 2ԺԵ (717—1268) թուականը:

Խաշգունա եկեղեցու հիւսիսային կողմը, մօա 15 արշին հեռաւ տրութեան վրայ շմուռած է մի բարձրաշխ, փառաւոր և կոթողանման արձան: Արձանը բաղկացած է երեք քառանկիւնաձև մեծ սիւներից, որոնք կանգնած են պատուանդանի վրայ. պատուանդանի արևմտեան կողմից սանդուխտներ կան: Երեք սիւները վերեկի միեւնաց հետ միացած են երկու փոքրիկ կամարներով, որոնք այժմ մասամբ քանդուած են. այդ փոքրիկ կամարների տակը կանգնեցրած են մի միապաղապ մժագոյն քարից շինուած կոթողներ, որոնց չորս կողմերն էլ քանդակուած են զարմանալի նրբութեամբ փոփագրուած պատկերներ և նկարներ: Սրանք էլ նման են Գտեղի և Արգուի կոթողներին, բայց աւելի նեղ են. ուշադրութեան արժանի են կոթողների վրայի նկարները, որոնք անպատճառ պէտք է խորհրդաւոր նշանակութիւն ունենան: Դժբաղգաբար մենք երկար ժամանակ չունեցանք՝ մանրամասն վիաելու և նկարելու այդ փուռանեղ կոթողը, մեր նախնեաց հրաշակերտ գործերից մէկը: Կոթողի վրայ արձանապրութեան հետք չկայ և յայտնի չէ թէ երբ և ո՞վ է շինել. միայն տաճակարար ասում են, որ կոթողի տակ

թաղուած է Սմբատ Բագրատունին: Երկի աւանդութիւնը մի պատմական հիմք ունի. եթէ Սմբատին էլ չլինի, անկասկած է, որ մի արքայազն կամ իշխանազն անձի գամբարան պէտք է լինի:

Կոթողներն ուշադրութեամբ նայողը կտեսնի, որ սիւների ստորին և միջին մասերը մաշուած, քերուած են. այդ առաջացել է մեր գիւղացիների մնութիւնապահուութիւնից, որոնք քերելով այդ հրաշակի սիւների քանդակները՝ իրքեւ հիւսնդութեանց բուժիչ միջոց են զործ զնում. այդպիսով հետպիետէ այդ սիրուն քանդակները կարող են քերուել, պէտք է արգելել այդ. բայց ինչը կարող է արգելը լինել մեր տգէտ գիւղացիների մնութիւնապահուութիւնից առաջացած այդ արարքին, քանի որ եւրոպական դարաւոր լուաւորութիւնն ու քաղաքակրթութիւնը գեռ ևս չէ կարողացել արմատախիլ անել նոյնալիսի մնութիւնապահուութիւնները և չերմեռանդ բողոքական գերմանացիները շարունակ քերում են Վարթրուրդ ամբոցումն եղած նուտերի բնակրուած սինեակի մի անկիւնի թանաքու հողը՝ հաւատալով որ այդ թանաքը կուտերի այն կոտրած թանաքամանիցն է, որ նա շպռաեց սատանայի վրայ...:

Արձանի պատուանդանի շրջագիծն է 25 և կէս արշին, բարձրութիւնը՝ 5 արշին, սիւների բարձրութիւնը՝ մօա 10 արշ., իսկ կոթողները մի փոքր ցածր են—շարունակ տեղացող անձրել խանգարեց մեղ մանրամասն չափելու այս արձանը:

Օձունը ծովի մակերեսովիթից բարձր է 1000 մետր:

Արեն արգին խոնարհուել էր գէպի իր մուտքը, երբ ճանապարհ ընկանք գէպի մեր մշտական իջևանը, Սանահին. գալիս նոյն ճանապարհով անցել էինք առաւտեան, երբ արել գեռ նոր էր լուսաւորում ձորի մութ անկիւնները, այժմ նոյն տեղովն անցնում ենք, երբ երեկոյեան հետզհետէ թանձրացող մթագին քողը վարագութ էր ամեն ինչ: Հասանք կամուրջին, բարձրացանք մեղ լու ծանօթ քարատայերի վրայի ոլոր-մոլոր պտոյաներով և արդին գիւղի խրճիթներում ճրագի լոյսեր էին պսպղում, երբ երգելով մօտեցանք վանքի պարիսպներին: Սանահնում մնացած մեր փոքրիկ ընկերները վերակացուի հետ զիմաւորեցին մեղ և ամենքս սրտի բուռն զկացմանց արտայայտութիւններով թնդացնելով պարիսպները՝ ներս մտանք մեր օթեանը՝ ովթնօրեայ ճանապարհորդութիւնից բերելով այնպիսի քաղցր լիշտութիւններ, որ երբէք չեն ջնջուի մեր սրտի խորբերից:



7739

2013

0003669



NL0003669

